ՍԱՐԵԻԵԼԵԱՆ

ՄԱՄՈՒԼ

1871

ՓԵՏՐՎԱՐ

Ա. ՏԱՐԻ ԹԻՒ 2

ԶՄԻՐՆԻ
ՏՊԱՐԻՐԱԿԱՆ ՏԵՍԻՆԱՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ

ՄԱՄՈՒԼ

ՀԱՆԴԷՍ ԱՄՍԵԱՅ

Ա. ՏԱՐԻ ՓԵՏՐՎԱՐ 1871 ԹԻՒ 2

ՄԱՅՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՔԱՆԻ ՄԸ ԽՕՍՔ ԱՌ ՄԱՅՐՍ

Մարց դաստիարակութեան վրայ որչափ խօսուի կ'ուժէ, կ'ըսէ հեղինակ մը, վասն զի խնդիրը կարևոր է և անհասանում։ Երբ տանն մը հայ կիներ մի միայն իրենց տունին տեղին հետն էին, երբ իրենց զաւակներու կրթութենէ և անտեսութենէ ուրիշ հոգ չունէին, կրնային դաստիարակութեան վրայ ճիշդ գաղափարներ ստանալու համար վիրքերու չդիմել, քանի որ 'ի բնէ տան հոգատար տիրուհիներ, փափկասիրտ մայրերը և կենդանի դաստիարակուհիներ էին. հայրենասիրութիւն, առաքինութիւն կ'ջամբէին մանկտւոյն իրենց կաթին հետ՝ և երբ Հայաստան վտանգի մէջ ընկնէր, ոչ միայն պատանիք 'ի սեր կրօնի և ազատութեան թշնամին հալածելու կ'վազէին, այլ և մարք կ'զինէին իրենց արիական և ազնիւ դդացումներով, անոնց քաջալերելով կ'լինէին և հրեշտակային հաւիներութեան, անձնուիրութեան օրինակ կ'հանդիսանային։ Ո՞ր մայր, ո՞ր օրիորդ կրնայ առանց արտասուելու կարդալ Վարդանանց շահատակ կանանց վիճակը, ո՞ր կինը կրնայ հաստատել որ այսօր մի և նոյն հոգւոյ արիութիւնն ու չարքաշութիւնն ունին մեր սեռակիցները։ Սարկութիւնը,

փափկասիրութիւնը, ազնասիրութիւնը կորուսել տուին մեր հինաւանդ ընտիր ընտիր հանգամանքը, և մեզ օտարոտի սովորութեանց դերի ըրին։ Սակայն եթէ իրաւ է որ այրը կինով մարդ կ'լինի, մեր կոչման անարժան պիտի դառնինք, եթէ անհոգ նստինք։ Թող հայ կանայք ալ սթափին և իրենց վայել դիրքը ձեռք ձգեն ոչ միայն ընկերութեան այլ և տան մէջ։ Մենք եւրոպական կանանց պէս քաղաքական ազատութիւն, իրաւունք և հաւասարութիւն չենք պահանջեր, այլ արժանավայել յարգանք մը, և այս յարգանքը մեր մայրական պարտաւորութեանց լրմամբը դիւրին է ստանալ։ Այս դարուս մէջ անդադար կ'գոչեն որ ընտիր մայրեր պէտք են մարդկային ազգի զարգացման համար, այս գոչումը լաւ նշան մը չէ։ Ընկերական հիմերը քակտող պատճառներէն մին ալ կանանց թոյլ և անփոյթ վարմունքն է, այնպէս որ այսօր մայրական դաստիարակութիւնը գիտութիւն մը, ուսում մը դարձեր է, մինչդեռ այս գիտութեան և ուսման ընական աղբիւրն տանն մը մարց սիրտերն էին։ Ռուսսօ, Էմէ Մարգէն, Ֆենէլօն այս կարևոր խնդիրը ճարտար դրչով յուզեցին, և մերայինք ալ քիչ շատ տեղեակ են անոնց կարծեաց այս մասին։ Բայց որովհետև կարողութենէս վեր է այնպիսի վսեմ հեղինակներու թարգման լինել, լաւագոյն սեպեցի աւելի պարզ և գործնական դասեր փնտռել այնպիսի հեղինակի մը մէջ որ նոյն ինքն ալ կին է, և՝ ըստ իս՝ կին մ'աւելի յաջողակ է այսպիսի փափուկ խնդրոյ մը վրայ ընականօրէն խօսիլ, քան թէ աշխարհիս ամենէն բարձր հանճարը։ Մանաւանդ մերազգեայ կանանց համար, որոնք եւրոպական սովորութիւններու հակամէտ են, աւելի զգալի և ազդու կ'լինին այն խրատներն որ նոյն իսկ դաստիարակ կնոջ մը սրտէ կ'բղխին, կին մ'որ խիստ ընական լեզուով և օրինակներով ի՛նչպէս թէ որչափ վտանգաւոր է մեր զաւակաց դաստիարակութիւնը վարձկան ձեռաց յանձնել, և թէ ինչպէս 'ի ընէ իր զաւակին կրթիչը կրնայ դառնալ մայր մը, եթէ կամենայ։ Հետևապէս տիկին Պոտուի Մայրական էֆեմերիտ դիրքէն մեզի յարմար մասերը քաղելով՝ արժան դատեցի թարգմանել, իմ սիրելի հայրենակցաց ազգիկ ծառայութիւն մ'ընելու առիթ դանելով։

ՆՈՅԵՄԻ

ԵՐԿՈՒ ՏԵՍԱԿ ՄԱՅՐԵՐ

Ա.

Պարզ և վայելչազարդ սենեկի մը մէջ երեք նորատի կիներ այլ և այլ կերպով կ'զբաղէին։ Մին կար կ'կարէր, որուն ձեւէն յայտնի էր թէ խանդարուր մ'է, միւս երկուքը երկու լուսափայլ հայելիներու առջև զարդ մը կ'մեծցնէին՝ որուն սովորաբար կանայք մեծ հոգ կ'տանին։ Այս զարդն Էմմա Ներվալ՝ տան տիրուհոյն էր. իր բարեկամուհին Մաթիլա Վէրնէյլ նոր եկեր էր որ զանի առնու թատրոն տանի, և որպէս զի ձեռքի գործը շուտով լմննայ՝ անոր օգնելու նստեր էր, մինչդեռ Էմմայի Սոֆի սպասուհին ալ Ֆոֆոդրայն զացեր էր որ նորաձև

գոտակ մը բերէ և սիրուհոյն Հաղուստն ու կապուստը անով լրանալով՝ փափաքելի ներգործութիւն մ՚ընէ Թատրոնի օթեկին մէջ։ Վերջապէս Սոֆի՝ սքանչելի գոտակը ձեռքը, ներս մտաւ. իսկոյն Էմմա առաւ և իր գլուխը դնելով՝ փառաւոր խարտեշ գիսակին մեստաքսի պէս փալփլուն գանգուրները բոլորեց։ Յետոյ այնքան նեղ ձեռնոցներ գրաւ ձեռքն՝ որ եթէ գիւրակոր և ընտիր տեսակէն չլինէին թերեւ շարժումէ մը պիտի պատռէին։ Կ՚մնար միայն ակնարկ մը նետել հայելիին մէջ՝ որպէս զի Հաղուստը բոլորը մէկէն դատէ, երբ փոքրիկ աղջկան մը լացը լսեցաւ և եռքը դայեկի մը ձայնը։

«Շուտ մը դուրս ելնենք, փախչինք, գոչեց Էմմա, ահա պրզտիկ աղջիկս ձայնը ձգեց, անշուշտ գիս կ՚փնտռէ։ Եթէ Շարլոտ դայեակը զանի ներս բերէ ձեռքէն ազատելիք չունինք։ Եկուր, Մաթիլա, եկուր ըսելով Մաթիլատը քաշքշեց և դէպ՚ի դուռը վազեց, բայց շատ ուշ էր, վասն զի երկու կիները դուրս չելած դայեակն և երկու տարեկան աղջիկը ներս մտան։

Պզտիկ Անայիսը մայրը տեսնելով ձայնը կտրեց և թեւերն երկնցուց։

«Տար սա աղջիկս. ինչու՞ ներս բերիր. միթէ չէիր գիտեր որ դուրս պիտի ելնեմ։

— Ներէ, տիկին, ըսաւ Շարլոտ, ի՞նչ ընեմ, այնչափ լացաւ ձեր սենեակը գալու որ ստիպուեցայ կամքը կատարել այն յուսով որ դեռ չմեկնած անոր սիրտը հանգարտեցնէք։

— Պէտք էիր մտածել որ այդ բանն անկարելի է. ի՞նչպէս կ՚ուզես որ հաղուած սքուած ուղտոդ ընեմ... գնա, բարի զաւակս, գնա Շարլոտին հետ, քեզի շաքար պիտի տայ։

— Ո՛չ, ո՛չ, պոռաց աղջիկը, նորէն լացը սկսելով՝ մաման կ՚ուզեմ, և թեւերը դէպ՚ի մօրը կ՚երկնցնէր։

Էմմայի սիրտը շատ նեղացաւ, վասն զի՝ թէև իր աղջիկը կը սիրէր՝ կ՚վախնար որ անոր լացը պիտի աւելցնէր զանի չգրկելովը. բայց իր նոր գոտակը, ծնօտին շնորհալի կերպով կապուած ժապաւէնները, իր ճարտարութեամբ շինած սքանչելի գանգուրները, վերջապէս իր վայելուչ հագուստին մանր մունր զարդերը պիտի աւրէր անշուշտ՝ եթէ մայրական գորովին միտ գնելով՝ իր զաւակը գրկէր, ուստի հարկ եղաւ մերժել իր զգուանքը,

թէև խեղճ աղջիկն աղչու շարժումներով և սիրալիր նայուածքովը իր մօրը դիրքը կ'խնդրէր։

Իրաւ է որ Էմմայի սիրտն ալ կ'վշտանար, կ'զղար թէ իր զաւակը զրկացը մէջ սեղմել և համբոյրներով անոր արտասուքը սրբելը խիստ քաղցր է, բայց ուրիշ տեսակ զբօսանք մ'այլուր փնտռելու կ'երթար, և պէտք էր անվթար հաղուստով ներկայանալ այն տեղ։ Մարդկան առջև փայլելու փափաքը յաղթանակը տարաւ, մայրական զորովն անոր զոհ ըրաւ։ Աղջկան աղաղակները սաստկացան, մայրը խոյս տուաւ, որպէս զի անոր լացը չ'լսէ, և շատ չանցաւ ամէն բան մոռցաւ իր տունէն հեռանալովն և զբօսանք գտնելովը։

Բայց այս նորատի կիներէն երրորդը, տիկին Տէլմ, մերժեց տիկին Վէրնէյլի և Ներվալի ընկերանալ։ Տիկին Տէլմ աւելի լաւ կ'սեպէր իր տունը մնալ, պարզասէր և առանձնակեաց բնաւորութիւն մ'ունէր, և թերևս ասով իր ամուսնոյն վարմունքին կ'հեաևէր, քանի որ աս ալ թէև ընկերային զբօսանքներէ բոլորովին հեռու չէր կենար, բայց աւելի շատ կ'սիրէր առանձին կենաց անուշութիւնները։

Այն օրը Մարի Տէլմ տիկինը, իր զործն առեր Էմմայի տունն եկեր, հետը Ճաշեր էր, որպէս զի անոր հաղուստին ու կաղուստին ներկայ գտնուի։ Երբ բարեկամուհիքը մեկնեցան, ինքն ալ մեկնիլ ուզեց. բայց գնալէն առաջ՝ պզտիկ Անայիսը սփոփելու Շարլոտին օգնեց, և ետքը Ճամբայ ելաւ անցած դարձածին վրայ մտածելով վշտալին։ Թէև Մարի գեռ յուսովին միայն մայրութեան անուշութիւնը կ'զգար, բայց սրտալին ձայն մը կ'ըսէր իրեն որ, եթէ զաւակ մ'ունենայ, աշխարհիս ամէն տեսակ զբօսանքները չպիտի կարենան զինքն իր զաւկին զբաղանքներէն զրկել։

Ի դարձին, տիկին Տէլմ՝ իր ամուսինը տունը գտաւ, այնպիսի ուշադրութեամբ գիրք մը կ'կարդար որ իր ներս մտնելը չիմացաւ, վերջն երբ տեսաւ զինքը՝ դիտելով որ աչքով հարցում կ'ընէ, ըսաւ.

«Սա տեսած գիրքդ դաստիարակութեան վերաբերող գիրք մ'է, որ յատկապէս մայրերու համար շինուած է»։ Եւ անուշ ու սուր աչք իր միտքը բացատրեց։

«Իրաւունք ունիս, բարեկամ, քիչ ատենէն մայր պիտի լինիմ, և այդ գործը կարդալ կ'ուզեմ։

— Այս նիւթիս վրայ ուրիշ գիրքեր ալ կ'գտնուին, վրայ բերաւ պարոն Տէլմ, և աղէկ կ'ընես եթէ անոնք ալ կարդաս որ ամէն մէկ գիրքէն քեզի յարմար տեսածդ քաղես, վասն զի պէտք չէ բնաւ մէկ առաջնորդի հետևիլ. երբ խնդիր մը կերպ կերպ կրնայ նկատուիլ, ծուռ Ճամբայ մը բռնած կ'լինի մարդ եթէ լաւագոյնը չփնտռէ։ Երբ հեղինակ մը կ'հաւնի, կրնայ կարդացողին խանդը զրդռել և ասով շատ անգամ աղէկը դէշէն չէ կարող զանազանել։

Այն օրէն սկսեալ՝ Մարի միայն դաստիարակութեան վերաբերեալ գիրքեր փնտռեց։ Նախ կարդաց այնպիսի գիրքեր որ կը սորվեցնէր մայրերուն թէ ողջոյ նիւթական պիտոյքն ինչպէս հայթայթելու է։ Ինքը կ'կարծէր թէ ծննդեան առաջին տարւոյն մէջ մի միայն մարմնական պիտոյքը հոգալ պէտք է. բայց յետոյ շուտով խնայաւ որ մարդուս բարոյական դաստիարակութիւնը ծնելէն անմիջապէս եաքը կ'սկսի։ Ասկից հետևցուց թէ այս դաստիարակութիւնը բարի մօր մը գործը պէտք է լինի, և հասկցաւ թէ որչափ անհրաժեշտ է այս կէտը հիմնովին ըմբռնելը, քանի որ իրեն ամենակարևոր բան մը կ'երևար։ Կարդաց, նորէն կարդաց և մտածեց, և կարդացածը բաղդատեց այն ամէն պարագաներու հետ որ իր կենաց շրջանին մէջ իրեն դիտողութեան նիւթ եղեր էին։ Եւ այսպէս դաստիարակութեան դժուարին գործին մէջ բաւական հմտութիւն ստացաւ և ամենևին չվհատեցաւ, վասն զի ազնիւ խանդով մը վառեր էր՝ որով ամենէն տկար կինը կ'զօրանայ երբ մօր զեղեցիկ տիտղոսը կ'հասկնայ և անոր արժանի լինիլ կ'փափաքի։

Քանի մ'ամսէ եաքը, տիկին Տէլմ աղջիկ զաւակ մը ծնաւ։ Իր կաթովը սնոյց զանի և ինքը խնամք տարաւ վրան, վասն զի վարձկանի մը խնամքը խիստ պաղ և անմտադիր պիտի երևէին իրեն. կ'զգար թէ մայրական գորովը միայն կարող է հասկնալ այն խեղճ էակներուն բարօրութեանը համար պէտք եղած փափուկ զգուշութիւնները, քանի որ բնութիւնը զանոնք մայրերուն կ'յանձնէ, անոնց սրտին մէջ դնելով զգայողութիւն մ'որ ողջոյ ձայներէն կ'յուզի, երկայնմտութիւն մ'որ մտադիր անոնց

մտիկ կ'ընէ, հոգասիրութիւն մ'որ անոնց առջևը կ'առնու, և անուշութիւն մ'որ զանոնք կ'խաղաղէ։

Տիկին Վէրնէյլ շատ անգամ Մարին տեսնելու կ'գար, և ամէն անգամուն կ'զարմանար որ խանձարուրի մէջ փաթթուած մանկիկի մը համար ողջ ողջ թաղուեր էր տան մէջ։ «Այս տարիքն ունեցող տղոց խնամքը, վրայ կ'բերէր նա, աւելի դայեկի մը գործն է, քան թէ նորատի կնոջ մը, որ ասոր համար ըստիպուած է փակուիլ տան մէջ և ամէն տեսակ զբօսանքէ զրկուիլ։ Իսկ ես, աւելի լաւ սեղեցի տղոս գիւղը մեծցնել տալ քան թէ քովս պահել։ Նոր սպասուհի մ'ևս բունելու պէտք պիտի լինէր, թէև դարձեալ անոր ձայներէն պիտի տաղտկանայինք, և ասոնք ալ այնպիսի անախորժ բաներ են որ սատկ կ'պատահին երբ լալկան տղեկներ մեր քովը կ'պահենք»։

Մարի՝ Մաթիլսին խօսքերը մտիկ կ'ընէր, և անոր պատասխան չտնելով լուռ կ'կենար, վասն զի կ'գիտէր որ իր բարեկամուհին մայրութեան մինակ ցաւերը կ'ճանչնար։ Սակայն սրբատանց կ'ցաւէր անոր վրայ որ կամովին կ'զրկուէր այն անպատում անուշութիւններէն որ մայրական հոգասիրութեան հետ կը խառնուին, կ'ուզէր նկարագրել անոր իր ուրախութիւնները, որով շատ անգամ իր սիրտը բղձկելու չափ կ'լեցուէր և կ'արտասուէր, բայց նորէն կ'լռէր մտածելով որ Մաթիլսին կուրծքը դեռ տղեկի մը զգուող ձեռքին տակ չէ թռթռեր, և կ'տեսնէր որ անկարող է հասկնալ այն լեզուին յայտարար բերկրութիւններն որ յերկնուստ ստեղծուած է բարի մայրերուն համար։

ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ*

Կ. Պոլիս, Յունիս 20—67.

Աղէք- Բարեկամ,

Երբ Պարոյր այսպէս նեսի պէս նետուեցաւ սոյն պարահանդիսին մրրկին մէջ իր Աշխէնին 'ի խնդիր, ես քարի պէս կեցայ և քայլ մ'անգամ առնելու չէի զօրեր։ Եղերականը մերթ

* Երբեմն Ծաղիկ հանդիսին մէջցաւ հետզհետէ 'ի լոյս ընծայուած այս հայկական նամակներէն մէկ քանին դեռ տպուած չլինելով՝ արժան դատուեցաւ հանդիսիս մէջ հրատարակել։

ծիծաղականին կ'մոտի։ Իմ անփորձ, միամիտ բարեկամիս դիրքը կարեկցութիւնս ու ծիծաղս շարժեց իրաւի. Աշխէնին հետքը որոնելու միջոցին՝ սրի ծայր մը տեսաւ և անհնարին բարկութեան բրդաւ։

Որչափ որ անշարժ մնացի, հանդիսատ չէի. կարծէի թէ դիմակաւոր հանդէսներու մէջ ստէպ պատահած խաղի կամ որոգայթի մը կոյր նահատակն է Պարոյր, և զանի գտնելու միակ միջոց համարեցի տեղէս չշարժիլ և թողուլ որ ալէծուփ ամբոխը նորէն ինձի բերէ զանի...։

Ժամ մ'այս մտատանջութեան մէջ կ'գտնուէի՝ երբ ետևէս ձայն մ'առի որ կ'ըսէր. — Պ. Վրոյը, դու այս աշխարհէն չես. երկինքը կ'ապրիս...»։ Իսկոյն դարձայ և ինչ տեսնեմ նորէն։ Նշանաւոր կանաչ դիմակը։ — Համը հոտը փախուցիր ալ, ինչ խրտուիլակի պէս մեր ետևէն ընկեր ես, հարցի անոր, ինչ կ'խնդրես, ո՞վ ես, ինչ ըսել կ'ուզես։ — Ըսել կ'ուզեմ թէ տէն բան իր ժամանակն ունի. պարահանդէս մ'ուր հազարաւոր դիմակներ վեր վայր՝ իրար կ'անցնին, կ'պարեն, կը նուագեն, կ'երգեն, դարաններ կ'լարեն, ճկնարան մը չէ, մենաստան մը չէ։ Այս տեղ ծանրագլուխ մարդիկ, պաշտօնական մարդիկ, չորս հինգ զուկի տէր մարդիկ, իմաստասէր մարդիկ, բոլոր տարին կնկան մ'երեսը չնայելու ուխտող մարդիկ, մինչև անգամ վարդապետներ կ'գտնուին... Ծպտեալ։ Ամէն աղգի մէջ ներելի է որ ամէն դասու մարդիկ օր մը խենդանան։ Դու շատ ծանր, շատ անխօսուն, շատ դիտող, շատ անհամ ես և լրտեսի մը հոգն ունիս. ամէն օր քեզի համար աւագ ուրբաթ է, գնա ուրեմն լեռ մը քաշէ և խոտ կեր... Թէև ամէն թերութիւններուդ վրայ աչք գոցելով՝ ես ալ քեզի կ'հետևէի, ճշգնաւորուհի կ'լինէի եթէ ազատ լինէի...։

— Թայց կատակը մէկդի, ո՞ւր է Պարոյրը, հարցի դիմակին. այն քու ետևէդ ընկաւ որ գանէ. քեզմով կ'յուսար գտնել նաև իր Աշխէնը, իր նշանածին մատնին, զոր տաճկի հանդ մը, վըհուկ մը խաղով մը մատէն առաւ...։

— Եթէ գործ չունի, թող գիս փնտուէ — պատասխանեց կանաչ դիմակը, ու զարմանալի արագութեամբ գլուխը դարձնելն՝ ու կարմիր նոր դիմակ մը դնելով՝ ինձ երեսէն ետև՝ յարեց.

— Հիմակ վախ չկայ. Պարոյը զիս չկրնար ճանչել, և ոչ իմ վրայիս պաշտպանել զիս, դու ես իմ պաշտպանս, ես քու աղախնդ, հրամայէ, ինչ կ'ուզես։

— Դու չես կրնար զոհ ընել զիս. ես ուրիշ բան կ'փնտռեմ; դու ուրիշ, մեր բռնած տարբեր ճամբաները չեն կրնար նոյն նպատակին տանիլ մեզ։ Ես լուռ ու մունջ կենալով կ'սրվիմ; մանաւանդ թէ կ'հրճռվիմ, երբ ուրիշները կ'պոռան, կ'պարեն, աշխարհ կ'մռնան։ Դու զոռում զոչումի մէջ սիրտանք, կատակի մէջ զուարճութիւն, ծուղակներու մէջ խնդութիւն կ'փրնտռես. մոլորեալ ասող մը կ'երևիս ամպոտ երկնի մ'երեսը, ասուլ մ'ես վաղամեռիկ, կ'երևիս և ընդ հուպ կ'անհետիս, մեր ապականակիր մթնոլորտը քեզ կ'խղդէ, երկին 'ի վեր սլանալու տեղ՝ երկիրն 'ի վար կ'սրանաս և վէհի մը բոլորտիքը կ'պարես...։

— Կ'սխալիս, պարոն — մրմնջեց զայրալիր կարմիր դիմակը. — քիչ մը խօսքդ կշռէ։ Ես քեզ աւելի սրտագէտ, աւելի սրամիտ կարծէի...։ Կ'լսես այս որոտալիր երաժշտութիւնը, կ'տեսնես այս հիանալի, հրապոյր տեսարանը, այս խնդալի դիմակները, թռուցիկ պատանիները, կ'տեսնես, լաւ, այս ամէնն ինձի համար անձայն են, մութ են, շուք են, անտեսանելի են։ Ինչ կ'ըսեմ, աշխարհս անդամ ինձի համար ընդան մ'է, բայց պատիւս, պարտաւորութիւնս կ'ճանչեմ։ Թշուառութիւն, աղէտք կ'ծանրանան գլխիս վրայ, և իմ աղէտիցս աւելի խորը թափանցելու համար այս հանդիսարանս եկայ։ Եւ որովհետև կրող կարգացողի անունն ունիս, քեզի հետ տեսութիւն ընել ուզեցի որ նոր դաս մ'ալ սորվիս։ Կ'դիտես հեռուն սա հաղուած շքեղած ու հերաստ գլխով մարդը, որ դիմակ ալ չունի, քանի որ բնականն իրեն հերիք է, կ'նայիս ինչպէս բերան բերնի կ'խօսի կնկան մը հետ որ չորցած կրտած բան մ'է, ու մինակ երկու սև ու կլոր աչեր ունի որով մարդ կ'թովէ, կ'տեսնես ինչպէս կ'կոտրուի, կ'քծնի, կ'աղերսէ, կ'պնդէ այն մարդն և քիչ մ'ևս կնկան ոտքը պիտի ընկնի որ խնդիրն ինչ որ է կատարէ, ահա այս հերաստ մարդը քանի մը զաւկի տէր, իմ ամուսինս է, ու ու երեսն երբեմն ամիսներով չեմ տեսներ. այս մարդը՝ եթէ մարդկութեան զղացում ունի., խենդանալով տաւ զիս, իմ ու-

նեցածս, զաւակներուս հացը կերան և սոյն անել Ճամբուն մէջ կ'դեղերի . . . : Իսկ ես աչքի լոյս թափելով ասեղն օրն 'ի բուն շարժելով՝ անմեղ դառնուկներուս պարէնը կ'Ճարեմ, և՝ եթէ կը յիշես, քեզ անծանօթ չեմ: Երբէք չպիտի յայտնէ՛ ինքզինքս քեզի, եթէ պատիւս չվիրաւորէիր, և այս կեղծ յիմարութեանս մէջ ցաւերուս մոռացումը, կամ լաւ ևս, յուսահատութիւն դրսնելու համար ըրած փորձս՝ թեթեւսօրէկ անձի մը գործ չհամարէիր: Դու քաջ պիտի գիտնաս որ շատ անգամ կնկան մը շըրթունքը ժպտելու ատեն սիրտը կ'արիւնի, այսպէս կ'պահանջէ ընկերութիւնը: Թէև օրերս սև սուգի մէջ կ'անցնէի, յոյս չէի կարծած. այս գիշեր այս աղ կորուսի, իմ չամուսնոյս անուանարկ և վատ ընթացքին ականատես եղայ, մահ 'ի սիրտ տուն պիտի դառնամ, և վշտացս մէջ պիտի թաղի՛մ: Սակայն պարտ մ'ունիմ կատարելու, այս է շնորհակալ լինել քեզ որ երկու տողով պաշտպան կեցար իմ դատիս գրոյդ մէջ. բայց այս դատը՝ որ թերևս ինձի պէս շատ մ'անբաղդ կիներու գան է, երկու տողով չպաշտպանուիր. գիրքեր, Ճարտասան բերաններ, եկեղեցիէն դուրս քարոզներ պէտք են իգական սեռին յարգը, պատիւը, անունն ու իրաւունքը վերականգնելու համար . . . »:

Կարմիր դիմակին, որ նոյն ինքն Իզարն էր, յուսակտուր ձայնը և արտօսր մ'որ արտեւանունքին վրայ թռչռաց՝ սիրտս սաստիկ յուզեցին: — Խնդրեմ, մի՛ շտապիր գնալու. քու ողբալի վիճակդ կ'յարգեմ և ներում կ'խնդրեմ որ անդէտս արդէն երած սիրտդ վշտացուցի իմ դիտողութեամբս: Մի՛ վհատիր, առաքինութեանդ և զաւակներդ մէջ փնտռէ՛ ոյժ և արիութիւն և թող որ վատշուէր ու ապաշնորհ մարդդ 'ի կորուստ դիմէ: Անպատեհ է վայրս այսպիսի քարոզ կարդալու. խօսքս կարճ կ'կապեմ զարմանալով որ՝ ինչպէս չարութիւնը, նոյնպէս բարութիւնն երբեմն կ'դառապարտի դիմակով խօսելու՝ որպէս զի ընկերսատիկեան լեզուներու ծաղր ու ծանակ չլինի: Քանի՛ քանի ծիծաղալիմ դիմակներու ներքև արտասուք կ'թափին արդեօք և անտես կ'մնան քեզի պէս, քանի՛ քանի նկուն ու ապէտաբեկ սրտեր ուրուականի պէս կ'թափառին արդեօք այս ուրախութեան անապատին մէջ և մոլորեալը կ'փնտռեն: Ահա մեր Պարոյրն ալ իրը կ'փնտռէ, և ի՞նչպէս պիտի գտնէ չգիտեմ: Դու միայն կա-

ղող ես այս հանելուկը մեկնելու, քանի որ մատ ունիս անշուշտ անոր մէջ։ Ուստի արտասուքդ սրբէ, մոռցիր պահ մը տառապանքդ, և բայատրէ թէ ո՞վ է այն տաճկի հանրին որ Պարոյրին մատնին առաւ, իմ բաղդս ալ նայեցաւ, ո՞վ է այն վրացին, որ քեզ Պարոյրէն բաժնեց սուր 'ի ձեռին։ Նոյնպէս կը խնդրեմ քեզնէ ցոյց տալ ինձ մարդ մ'որ ճանչէ և պատմէ թէ ո՞ք են այն բարձրաղիր, այն իմաստասէր մարդիկ, մինչև վարդապետներ որ սոյն պարահանդիսին մէջ կ'գտնուին, ինչպէս որ դու իրաւի կամ կատակով ակնարկեցիր արդէն, երբ դերդ խաղալու ելեր էիր, և կ'խոստովանիմ որ շատ լաւ կ'խաղաղայիր այդ դերդ։ Այս խնդիրս քեզի կ'առաջարկեմ, ինչպէս որ հրաման տուիր որ ընեմ։ Իմ նպատակս մարդ ճանչել է, նոյն իսկ պարահանդիսի մը մէջ, և եթէ դու չես կարող՝ կ'աղաչեմ կէրոն մը գտիր ինձ։

— Ես տղէտ ու ապիշաւ Իզարս, անկարող եմ, Պ. Վրոյր, փափաքդ կատարելու։ Ահա քեզ կէրոն մը, յարեց նա, ցոյց տալով հեռուն վրացի մը ղոր արդէն տեսեր և Շամիլի նմանցուցեր էի, իմ եղբայրս է նա և քիչ շատ հմուտ. նա միայն կարող է քեզ գոհ ընել։ Իսկ Պ. Պարոյրը չկրսուիր և քիչ առենէն դառնալով քեզ հանելուկը կ'մեկնէ։

Այս ըսելով Իզար՝ Շամիլի ներկայեց զիս, որ նոյն պահուն օթեակի մը մէջ նստեր չորս դին կ'դիտեր դիմակովը։ Երբ խընդիրս խմացաւ, — Ես ալ ներկայ գտնուող քանի մ'երևելի ազգայիններ մոռվին կ'դատէի, ըսաւ. ծանրութիւն մը չպիտի լինի ինձ դատողութիւններս բարձրաձայն ընելով, ուստի նրատիր և մտիկ ըրէ...։

ՎՐՈՅՐ

ՊԱՏՄԱԿԱՆ

ԲՐԻՏԱՆԻԱ

Մեր խոստման համեմատ՝ Բրիտանիոյ պատմութեան վրայ հարևանցի ակնարկ մը նետելու կ'փութանք, ոչ միայն Իվանոֆ վէպին պատմական մասերը լուսաբանելու, այլ և պատմասէր ընթերցողին ընդհանուր ծանօթութիւն մը տալու համար։

Հռոմ՝ միշտ ռիշտ ու փառասէր՝ բոլոր հին աշխարհի տիրելու ատեն՝ Բրիտանական միջապատ կղզիներն ալ իր լծին ներքև առաւ։ Մինչդեռ Պոմպէ՝ Յուլիոս Կեսարի ոսոխը՝ Հայաստան կ՚արշաւէր, մեր անքաղաքագէտ ու վէս Տիգրանին հաշտութեան ծանր ծանր պայմաններ կ՚առաջարկէր, Հռոմի անհաշտ և անդուսպ թշնամի՝ Միհրդատն անորմէ կ՚զատէր, Կեսար՝ Գաղղիան նուաճելէն ետև՝ Բրիտանիա կ՚մտնէր (58 Ք. Ա.)։ Սակայն Հռոմ անկարող էր Բրիտանիոյ հին բնիկ Բրիտոններն՝ որ Կելտական ցեղերէ կ՚իջնէին, լիովին ընկճել, ինչպէս նաև չէր կրցեր Պարթևները ծնշել, և արդէն իր կործանման ժամը հասեր էր։ Ասիոյ խորերէն և Եւրոպայի հիւսիսային երկիրներէն վայրագ ժողովուրդներ, Ֆրանգք, Գերմանք, Կոթացիք, Հունք, Ալանք, Վանտալք, վրէժխնդրութեան աղաղակներով Եւրոպայի արևմտեան կողմերը կ՚արշաւէին և հռոմէական աշխարհը կ՚գրգռէին։ Արդէն Հոնորիոս կայսրը Բրիտանիէն հռոմէական զօրայ գունդերը քաշեր էր, և որովհետև Բրիտոններն երկարատև ստրկութենէ վատացեր և զէնք գործածելու սովորութիւնը մոռցեր էին՝ ընդունայն կ՚աշխատէին Քալէտոնիայի (հին Սկոտիա) Բիկտ և Սկոտ ըսուած հրոսակներուն դիմադրել. հետեւապէս օտար ազգեր օգնութեան կանչելու ստիպեր էին։ Բաղդախնդիր ժողովուրդներ, ինչպէս Սաքսոններ ու Անկլներ՝ որ Իլսպա գետէն անցեր և մինչև Հռենոսի մօտեցեր էին՝ իրենց Հօրսա զօրապետին առաջնորդութեամբը Բրիտանիա կ՚անցնին (449 Ք. Ե.) և Սկոտները վանելէն ետև՝ իրենց զէնքը նոյն իսկ Բրիտոններուն դէմ կ՚դարձնեն, շատերը կ՚ջարդեն, երկրին անունն Անկլիա կ՚անուանեն. բնիկներուն մէկ մասը կալ և Քօրնվալ դաւառները կ՚քաշի, մաս մ՚ալ Գաղղիա կ՚գաղթէ և Արմօրիկ ըսուած դաւառը բնակելով՝ անունը Բրիտանիա (Bretagne) կ՚դնէ, որ ցարդ նոյն անուամբ կ՚կոչի։

Այն ատեն նորեկ Անկլո-սաքսօն ժողովուրդն* Օտինի հեթա-

---

* Ինչպէս Ֆրանգ, նոյնպէս Անկլո—սաքսոնեան ժողովուրդը Գերման ցեղէ կ՚սերէր։ Ի բնէ անկախ և անվեհեր մարդիկներ՝ իրենց սովորոյթն ու ազգային հիմնարկութիւնները Բրիտանիա փոխադրեցին։ Ազատ սաքսոն տանտէրն իր ազգականներով և գերիներով կ՚կազմէր ընտանիք մը. քանի մ՚ընտանիքէ կ՚բաղկանար շէնը (commune), կամ հասարակապետը՝ ուր ազատութեան դրօշը միշտ վառ կ՚պահուէր. իսկ շէններէ կ՚կազմուեր նահանգը (shire)։ Երկրին մէկ մասը՝ յատկապէս արօտներն ու անտառները հասարակաց էին. հերկելի

նոսական պաշտօնը կ'հաստատէ, հետ զհետէ Բրիտանիոյ միւս մասերը կ'նուաճէ, և եօթ պզտիկ տէրութիւններ կ'կազմէ, որ Եպտարքիա (heptarchie) կ'անուանին, մինչև որ Իկպերտ՝ Վէսէքսի իշխանը 827ին բոլորը կ'միաւորէ և Անկլիոյ թագաւոր կ'կոչուի։

Արդէն հեթանոս Սաքսոնները 7ոդ դարուն քրիստոնէութեան դարձեր էին Օկուստէն կրօնաւորին միջոցաւ և Քէնթրպըրիի մէջ եպիսկոպոսական աթոռ մը հիմներ էր. ինչպէս նաև Բրլանտա Ս. Պատրիկի ձեռօք, նոյնպէս Սկոտիա Աւեսարանն ընդուներ էին։

Իկպերտի յաջորդներուն օրովը Դանեցի (Տանիմարդացի) ծովահէններ Բրիտանիա կ'ասպատակեն ստէպ և մինչև Լոնտօն քաղաքը կ'հասնին, եկեղեցիներ, վանքեր կ'թալանեն և Մեծն Ալֆրէտ թագաւորը դահէն վար կ'ձգեն։

Ալֆրէտ՝ որ Մեծն Կարոլոսէ առաջ՝ միջին դարու ամենէն Լրևելի իշխանն եղաւ, իբր օրէնսդիր, քաղաքագէտ, գրագէտ և քաջ պատերազմական մարդ, կ'յաջողի նորէն դահն ելնելու և տէրութեան բարօրութեան համար կարգ կանոն և զանազան տնօրէնութիւններ ընելու։ Իր մահէն ետքը՝ նորէն խառնութիւն կ'ծագի, Բրիտոնները Դանեցւոց հետ միանալով վերջին Ճիգ մը կ'ընեն Անկլօ-սաքսոնեան իշխանութիւնը տապալելու, բայց

հողերը՝ որ մաս մաս բաժնուած էին, ազնուականաց և ազատ դեղացիներու կը վերաբերէին։ Թագաւորը տոհմիկ դերդաստաններէ կ'ընտրուէր և երկրին մեծագոյն բաժինն իրեն էր։ Միայն ազատ մարդիկ արտօնութիւն ունէին զէնք կրել, օրէնք շինել և հասարակութիւնն մէջ բուէ տալ. ուսերու վրայ թափուած երկայն մազեր և զէնքեր ազատ մարդու գարդերն էին։ Ազգային ժողովը՝ (folkmot) ուր ամէն ազատների մուտ ունէր՝ վերջէն երեսփոխանական եղաւ և խնամատոյց ժողով կոչուեցաւ (wittenagemot)։ Այս ժողովը՝ ժողովրդեան իրաւանց պաշտպան և միանգամայն հանրաքուէ և օրէնսդիր ժողով մ'էր. նա կ'ընտրեր թագաւորը, ասորմէ համար կ'պահանջէր, խաղաղութեան և պատերազմի խնդիրներ կ'լուծէր և թագաւորը ապն ժողովին հաւանութեամբը միայն կրնար զօրք ժողվել և սուրբ գնել։

Ընթերցողը կ'դիտէ անշուշտ այս օրինաց մէջ ազատական կամ սահմանադրական կառավարութեան մը սկզբունքը, որ Գերման ազգերու ձեռօք ծաւալած է նաև ուրիշ երկիրներու մէջ և արդի վիճակին հասած է։ Թէև Նորմանները տիրապետութիւնէ եւս՝ սաքսոնեան հիմնարկութիւնները մասամբ ջնջեցան, և աւատական դրութիւնը հաստատուեցաւ, սակայն այս դրութեամբ ամէն նահանգ և գաւառ անկախ և ազատ քաղաքական մարմիններ չկազմեցին, ինչպէս 'ի Գաղղիա ինքնագլուխ իշխանները, այլ մէն մի լօրդ կամ նախարար մերթ թագին մերթ ժողովուրդին կապուած կեցան և երկրին ներքին օրէնքը գրեթէ անվթար մնալով՝ այժմեան Բրիտանական հաստատուն Սահմանադրութեան խարիսխն եղան։

Աթէլստան թագաւորն իր Էտմոն արիասիրտ որդւոյն հետ բոլորովին կ'ընկճէ խռովարարները։ Էտմոնի թուլամարթ յաջորդները՝ Քէնթբրէրիի Սբ. Տոնստան եպիսկոպոսին ազդեցութեամբը՝ կառավարութեան սանձը կղերին կ'թողուն։ Էթէլրէտ Բ. թագաւորին օրովն Անկլո-սաքսոններն ահռելի ջարդ մը կ'տան Դանեցւոց, բայց Դանիոյ Սուէնոն թագաւորը նորէն Անկլիա կ'ասպատակէ և իր որդին Մեծն Քանուդ Անկլիոյ թագը գրաւելով մանղամայն Դանիոյ և Նորվեկիոյ թագաւոր կ'հռչակուի և այն ատեն քրիստոնէութիւնը նոյն երկիրներուն մէջ ալ կը մտնէ (1017–1036)։

Քանուդի մահէն ետքը՝ Անկլո-սաքսոնեան ցեղէն Էտվարտ խոստովանողն դահը կ'ելնէ։ Էտվարտ օտարին դահակալութեան ատեն Նորմանտիոյ Ռոպէր սատանայ անունով իշխանին արքունիքը բնակեր և Ֆրանքո-Նորմանեան բարուց ու վարուց սովորելով իր հայրենի աւանդութիւնները մոռցեր էր. մանաւանդ Անկլո-սաքսոն կղերին անկախութեան ոգին, որով միշտ Հռոմի Ճիրանէն հեռու մնացեր էր, կ'ատէր և Նորմաններուն աւելի սէր կ'ցուցնէր քան թէ իր յատուկ ժողովրդեան։ Կ'ըսի նաև թէ անժառանգ մեռնելու ատեն՝ Նորմանտիոյ Ռոպէր իշխանին որդին՝ Կիյոմ դուքսը (Վիլյէմ) իրեն յաջորդ կ'նշանակէ։ Սակայն Անկլիոյ ժողովուրդը կ'ապստամբի և Դանեցի Կոսվինի որդին՝ Հարօլտ կոմսը՝ որ Էտուարտի ատեն՝ իշխանութիւնը կ'վարէր, թագաւոր կ'ընտրէ։ Նորմանտիոյ յանդուգն ու խրոխտ դուքսը՝ Վիլյէմ՝ 60000 զօրքով Անկլիա կ'անցի և Հէստինքսի Ճակատամարտին մէջ Հարօլտի յաղթելով (1066) բոլոր երկրին կ'տիրէ։

Վիլյէմ՝ որ յաղթող կ'կոչուի, Անկլո-սաքսոններու հողերը իր մարտակից Նորման ասպետներուն մէջ բաժնեց, և Անկլիոյ արդի ազնուապետական դրութեան հիմը դրաւ, Ֆրանգո-Նորման լեզուն խօսելու հրամայեց, երկրին ազատական օրէնքն ըստ մասին ջնջեց, կրօնաշաղ ըսուած կանոնը հաստատեց՝ որով ամէն մարդ՝ իր տեղւոյն զանազան երեկոյեան ժամը եօթին զարնելուն՝ կ'պարտաւորէր տան լոյսը մարել՝ որ դողերը մուրին գործէն՝ և անտառային խիստ կանոններ դրաւ, այնպէս որ նոյն իսկ Նորմաններն ազատ չէին որսորդութիւն ընելու։ Մէկ խօսքով Վիլ-

յէմի ձեռքը հաստատած աւատական դրութիւնը յանկարծ բոլոր Անկլիան ամփոփեց և երկաթէ ուռկանի մը պէս նախկին բնիկները պրկեց։ (Շարունակելի)

ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՎՐԱՑ ԳՐԱՒ ՄԸ

Բ.

Արմենակ Երանեան Պէյօղլու կ'բնակէր իր հօրեղբօր ու հօրաքեռը տունը որոց երկուքն ալ ամուրի էին և իրենց դասու մարդերուն կատարեալ տիպարը կ'ներկայէին։ Երկուքն ալ դեր, կլոր ու խնդումերես՝ երբ զիրենք զրգռող բան մը չկար... իրենց եղբօրորդին կ'սիրէին երբ իրենց համար մտադիր էր և նոյն իսկ երբոր չէր։

Արմենակ հետեւեալ առտու սովորական ժամուն արթնցաւ, հագուեցաւ և հայի սենեակն իջաւ ուր իր հօրաքոյրը ճաշը կը պատրաստէր և հօրեղբայրը Զամուռճեանի մէկ գրուածքը կը կարդար։

— Բարի լոյս ձեզ... ինչպէս էք այսօր, հարցուց նա ներս մտնելով։

— Օ՛ բարի լոյս, Արմենակ, շատ լաւ, և դո՞ւ։

— Շատ աղէկ շնորհակալ եմ, պիտի պատասխանէր Արմենակ, բայց զգաց որ քիչ մը գլուխը կ'ցաւէր և յիշելով որ սովորական բոլոր սուտերէ զգուշանալու էր, անկեղծօրէն ըսաւ, քիչ մ'աղէկ չեմ, գլուխս կ'ցաւի։

— Ինչպէս, գլուխդ կ'ցաւի... մեծ չ'խօսիմ, այսօրուան երիտասարդները մեղքնալիք են, պատասխանեց հօրեղբայրը։ Ես քու տարիքն ունեցած ժամանակս միայն սանտրելու ատեն գլուխս մ'ունենալս կ'տեսնէի։ Հիմա ալ մէյ մ'երեսս նայէ, ինչպէս եմ։

Շատ ուինտ ըսելն Արմենակին լեզուին ծայրն եկաւ, բայց երդումը յիշելով ըսաւ.— Այնչափ աղէկ չես։

— Հէ՞, դոչեց հօրեղբայրն ապշած։

— Կ'ըսեմ, հօրեղբայր իմ, որ ամենևին աղէկ չեմ դտներ ձեզ։

— Ի՞նչ ըսել կ'ուզես... աղէկ չեմ մի... ինչու՞ համար։

— Վասն զի շատ դեր ես... վիզդ շատ կարճ է... երեսդ շատ կարմիր, և... և...

— Եւ վախ կայ որ կաթուածահար մեռնիմ, անանկ չէ։

— Այո՛, հօրեղբայր իմ։

— Անուն հո՛ր և որդո՛ւ, պոռայ ծերուկը բարկութենէն շունչը կտրած։

— Ո՛հ, Արմենակ, ըսաւ հօրաքոյրը սրտաբեկ, ինչո՞ւ այդպիսի բաներ կ՚ըսես։

— Ինքը հարցուց, ես ալ իրաւը պատասխանեցի, ըսաւ երիտասարդը։

— Հա՛, կ՚ուզէ որ մեռնիմ, պոռայ ծերը։

— Չէ՛, հօրեղբայր իմ, ըսաւ Արմենակ... չափազանց... այսինքն ըստ բաւականին կ՚ցաւէի թէ որ մեռնէիր։

— Ըստ բաւականին կ՚ցաւէի՞ր, կրկնեց հօրեղբայրը, կարծեմ նաև որ ըստ բաւականին գոհ կ՚լինէիր թէ որ ինէ սպասած խոշոր ժառանգութիւնդ ձեռք ձգէիր։

— Այո՛, հօրեղբայր իմ, փսրտաց քթին տակէն Արմենակ։

— Ճաշակ վկայ, գոչեց ծերն ալ ոտք ելնելով, սա չափը կ՚անցնէ, և անհաւատալի լրբութեամբ նախատինք նախատինքի վրայ կ՚դիզէ։

Այսպէս խօսելով յանկարծ իր եղբօրորդւոյն առջև կանգ առաւ, ու բարկութենէն դողալով երեսն ՝ի վեր նայեցաւ։

— Հիմակ խօսէ նայինք, պարոն... ի՞նչ ըսել կ՚ուզես։

— Պարզապէս Ճշմարտութիւնը խօսեցայ, պատասխանեց երիտասարդը։

— Ապերա՛խտ... չարասի՛րտ, մրմնաց ծերը կատղութենէ կտրած ձայնով մը։

— Բայց, Արմենակ, ըսաւ հօրաքոյրը՝ որ լուին զարմանքով մ՚այս տեսարանը մտիկ ըրեր էր, ինչո՞ւ այսպէս կ՚վարուիս մեղի հետ, ի՞նչ ըրինք քեզի։

— Ոչինչ, հօրաքոյր իմ, ես միայն Ճշմարտութիւնը կ՚զրուցեմ։

— Բայց դու ալ լաւ գիտես որ մտքէդ անցածը չես խօսիր։

— Ընդ հակառակն, հօրաքոյր իմ։

— Ո՛չ, կ՚ըսեմ, որովհետև քաջ կ՚զգաս որ անմիթար կ՚լինէիր դու, եթէ հօրեղբայրդ կամ ես մեռնէի։

— Ո՛չ, հօրաքոյր իմ։

— Այ՛ անանման հրէշ. ծո՛ զմեզ մեռցնել կ՚ուզես, պոռաց

հօրաքոյրն աթոռի մը վրայ ըլնալով, ետքը թաշկինակն աչերուն տանելով սկսաւ լալ։

— Զձեզ մեռցնել չեմ ուզեր, հօրաքոյր իմ, վրայ բերաւ Արմենակ, միայն կ'ըսէի որ եթէ հօրեղբայրս կամ դու մեռնէիր, անմխիթար չէի մնար. բնական չէ որ երիտասարդ մ'իր հօրեղբայրը կամ հօրաքոյրը կորսնցնելուն համար ինքն ալ մեռնի։

— Անզգամ հրէշ... ինչեր կ'ըրուցես։ Թունաւոր խօսքերդ երակներուս մէջ արիւնս կ'սառեցնեն, ըսաւ խեղճ կինը հեծկլտալով։

— Թող տուր ալ, Նեվրիկ, բերանդ մի բանար, պոռաց ծերը թիկնաթոռի մը վրայ ըլնելով ու իր կրակ դարձած և քըրտնած երեսը սրբելով։ Տուներնուս մէջ օձ մը մեծցուցեր ենք որ զմեզ սիրտի մեռցնէ։ Սակայն Յակոբ եղբօրս միակ զաւակն ըլնելուն, անոր յիշատակին համար ըլնի, եթէ իր ըսած խօսքերն ետ առնէ ու զղջայ, կ'ներեմ իրեն։

— Լսեցիր, Արմենակ, ըսաւ հօրաքոյրը թաշկինակը մէկդի ընելով և տղուն նայելով աղերսաղին, ... շուտով ըսէ որ ըրածդ կատակ էր և սուտ, ես ալ դիտեմ անանկ ընելը։

— Բայց, հօրաքոյր իմ, պատասխանեց Արմենակ թոթովելով, խօսքերս ետ չեմ կրնար առնուլ, վասն զի իմ զգացմանց թարգմանն են անոնք։

— Կորիր տունէս... վայրկեան մը հոս չմնաս. հիմակ խկոյն սիրտ՝ երթամ կտակս ալ պատռեմ։ Ալ ինէ մէկ սև հինգնոց մի յուսար. քրոջս եկամուտ մը սիրտի կապեմ և մնացածը ֆրիմէն վրայ սիրտի դրեմ, պոռաց ծերն իր եղբօրորդւոյն վրայ վազելով զոր դէպ'ի դուռը հրեց։

— Կ'աղաչեմ, Աւետիս, ըսաւ հօրաքոյրը, թող որ չգացած կտոր մը բան ուտէ, անօթի փորանց, անձրևին դուրս ելնելը աղէկ չէ։

— Բա՞ն մ'ուտէ, անօթի սատկի նէ տանս մէջ պատառ մը հաց սիրտի չուտէ, պատասխանեց Աւետիս աղան որու կատղութիւնը չիջեր էր բնաւ։

Արմենակին աչերը լեցուեցան, և ներսէն եկաւ որ հօրաքրոջը թեւերուն մէջ նետուի կամ հօրեղբօրը վիզը պլլուի՝ ինչպէս որ մանկութեան ատեն սովորութիւն ունէր ընելու, երբ որ յան-

ցանք մը գործէր, բայց խոստացած ըլլալուն որ ճշմարտութիւնը խօսելուն համար ներում չենդրէ, ֆէսը գլուխը դրաւ ու Ֆաթ Բաբով Յեղ, ըսելով դուրս ելաւ։

— Աս ինչ ապերախտ ու քար սիրտ ունի եղեր, ըսաւ Աւետիս աղան դառնագին հառաչելով, և այնպիսի եղանակով մ'որ կ'յայտնէր թէ սիրտը խիստ կարեւէր խոցուած է։

— Արդեօք ողորմած հոգին ինչ կ'տեսնէ իր տղուն ըրածը, շարունակեց հօրաքոյրն ողբալով։

— Բայց խելքին ինչ փչեց որ հեռերնիս այսպէս վարուի, շարունակեց Աւետիս աղան։

— Ի՞նչ գիտնամ ես, պատասխանեց քոյրը յուսահատութեամբ... բայց կարելի է խեղճ տղուն խելքը գլուխը չէ, անշուշտ բան մ'ունի։ Ըսաւ որ ինքզինքն աղէկ չէր զգար ու վարմունքն ալ տարօրինակ էր, երբ որ ներս մտաւ, տեսայ որ աչքերուն մէջ ապշութիւն մը կար, ուելցուց խեղճ պառաւն ու երեւակայութիւնն իրերը կ'մեծցնէր։

— Կ'կարծեմ, հարցուց ծերն անհանգստութեամբ։

— Անշուշտ, պատասխանեց հօրաքոյրը, և թէ որ խելքին բան մ'եկաւ նէ՝ չէմ զարմանար, խեղճ տղան։ Այս բաները մինչև իրիկուն կանգունը ձեռքը ժապաւէն ու բամպակեղէն չափելէն և գիշերները տետրակներուն գիրերուն փակելէն կ'ծաղի ահա։ Շիտակը ինչ աղէկ բան ըրիր զան դուրս վռնտելով անանկ ատեն մ'որ առաջուընէ ուելի մենէ պէտք ունի։

— Բէհ, բան մը չունի, կնիկ. անոր սիրտը զէշ է, ալ խօսքն ընել չեմ ուզեր, պրոյ Աւետիս աղան՝ որու բարկութիւնը նորէն ոտք կ'ելնէր։

— Ի՛, կեցիր նայիս, խենթեցեր է, կ'ըսեմ քեզի, թէ ոչ անանկ սրաերնուս դպնալու բաներ կ'ըսէր մը մեզի, երբէք ասանկ բան ըրած ունէր։

— Ծառանգութենէս պիտի զրկեմ զան... և առնս ոտք պիտի չկոխէ նա, ըսաւ Աւետիս աղան հաստատութեամբ։

Գ.

«Ա՛ռ քեզի առաջին դասը, կըսէր Արմենակ խրովի դէպ'ի իր խանութն երթալով։ Դեռ ճշմարտութիւնը խօսելու չսկսելս

ժամ մը չկայ և արդէն տունէս վարեցայ ու ժառանգութիւնս կորուսի . . . : Ո՛հ, խնդրեմ, ներեցէք ասիկն . . . օրիորդ Կատար » :

Երիտասարդն այնքան մտախոհ էր որ գացեր անդրդուշաբար դէր կնիկի մը զարնուեր էր որ եռայարկ և առաղասանները բացած նաւու մը կ'նմանէր իր բոպանէրով և մալոֆոֆով որ բոլոր փողոցը կ'բռնէր :

— Հա՛, հա՛, հա՛, խելքդ ո՞ւր էր, Պ. Արմենակ, հարցուց խնդալով օրիորդ Կատար :

— Հօրեղբօրս և հօրաքրոջս հետ, պատասխանեց Արմենակ մեքենայաբար նայուածքը դիմացինին այլանդակ կապուտակին վրայ նետելով :

— Հօրեղբօրդ և հօրաքրոջդ հետ էր ա՞ . . . ատ ինչ բարի ես . բայց այդպէս դիտածդ ի՞նչ է . . . ղլխաբիկս :

— Այո՛ :

— Է՛հ, որովհետև կ'խոստովանիս, ահա նոր ու նոր է . ըսէ նայիմ անկեղծօրէն, ինչպէս կ'գտնես զայն :

— Շատ աղէկ, բայց ինձ կ'թուի որ քեզ աղէկ չերթար :

— Ինչո՞ւ, պարոն, խնդրեմ :

— Վասն զի քեզի համար շինուած չէ :

— Եւ ինչո՞ւ, կ'ուզէի գիտնալ . գիտեմ որ դու Ճաշակ ունիս, շիտակն ըսէ :

— Անանկ է նէ, օրիորդ Կատար, շիտակն ըսելով կ'գտնեմ որ քեզի պէս կնիկի մը համար՝ շատ շքեղ, տարիքիդ համար՝ շատ գունաւոր, և սենեկապանուհիի մը համար (femme de chambre), ինչպէս որ դու ես, շատ դեղեցիկ է :

— Իմ տարիքս քեզի ո՞վ ըսաւ, պարոն, պոռաց օրիորդ Կատար հաղիւ իր բարկութիւնը զսպելով :

— Քու դէմքդ, մազերդ ու աչքերուդ տկարութենէն կ'դուշակեմ, այս երեք նշաններն անվրիպելի են :

— Պարոն Արմէն, զիս նախատե՞լ կ'ուզես :

— Բնաւ, ամենևին, օրիորդ Կատար, այլ դու իմ կարծիքը կ'հարցնես, և ես անկեղծօրէն կ'յայտնեմ քեզի զայն :

— Ուրեմն ես քեզի համար գանդաղ, պառաւ ու ծիծաղելի կերպով զգուած կին մ'եմ :

— Ատոր պէս բան մը։

— Դուն՝ալ անմիտ, անբան, ադէսին մէկն ես, պու

ին երեսը կ'ելնեն, հապա միաքս Պ. Մոմսին անիրաւ լեզուին չափը տալ է, քանի որ օրիորդ մը պղտիկութիւն կ'սեպէ անոր պատասխան տալը, որչափ որ իրմէ աւելի շատ խօսելիք փաստեր ունենայ։

Լաւ, ինչ ըսել կ'ուզէ Պ. Մոմս. մեր աղջիկները պճնասէր ու շռայլ են եղեր, ասոր համար նշանած չեն գտներ եղեր. ինչ աղէտ պատահաւ։ Պարոն, կ'յիշես սա առածը, «Աղէսին դունչը խաղողին չէ հասեր, տհաս է ըսեր»։ Թէ որ Պ. Մոմս իրօք ուրիշ պատանիներու թարգմանն է՝ պէտք է դիտնայ որ ճիշտ աղուէսին ըսածը կ'ընեն։ Անպիսիներ կ'ճանչնամ՝ որ այս այն օրիորդին հոգի կ'տան և երբ կ'նային իրենց արկղն՝ ուր մուկն իյնայ զլուխը կ'պատռի՝ էհ, այս օրիորդը պչրանք շատ կ'սիրէ կ'ըսեն, և հով կլլելու կ'դառնան։ Այս օրուան օրս որ տղան մարմնապաշտ, ինքնասէր, շքամոլ չէ, որը հաղուստի համար աւելի տակ չվատներ քան թէ աղջիկ մը՝ որ շատ անգամ տղոց հաճելի երևելու համար կ'հաղուի կը սղուի և չէ թէ յատուկ զարդասիրութենէ, վասն զի կ'տեսնէ որ պարզասէր, անշուք օրիորդ մ'այնչափ արժէք չունի պատանիներու առջև՝ որչափ զարդասէրն ու փայլիլունը։ Գնա պարահանդէս մը, այն աղջիկն որ իրեն աղնիւ, համեստ և պարզ հաղուստովը կ'փայլի՝ ինձի պէս պատուի կարդ կ'անցնի, նայող չունենար, և ոչ իսկ պարորդ մը, մինչդեռ այն որ սնդուսէ, թաւիշէ, անդամանդէ ու մարգարտէ պեպկ մ'է և գրսի լուսով կ'փայլի քան թէ ներսի, ուվանոնաներ կ'լսէ և ձեռքի ու զլխի վրայ կ'պտրտի։ Շատ տղաք արտաքին փայլն այնքան կ'սիրեն որ աղջկան մը բարոյական արժէքը չեն քններ, չեն նայիր թէ արդեօք իրենց վիճակին, բնաւորութեան կ'յարմարի, ժիր ուրնտեսուհի մ'է, տուն դարձնելու կարող է, պարզութիւն կ'սիրէ՞ թէ ոչ. այլ կ'հարցնեն թէ ինչ օժիտ ունի, քանի՞ հազար լիրա կրնայ բերել, սև թէ կապոյտ աչեր ունի, պարել թէ մինակ քալել գիտէ, ամէն մարդ անոր աղտորութեան վրայ ինչ կարծիք ունի. և այսպէս կ'սպասեն որ առիթ մը պատահելով իրենց բաղդը շինեն քան թէ ընտանեկան երջանկութիւնը։ Օրիորդ մը, մանաւանդ հայուհի մ'որչափ 'ի բնէ պճնասէր ըլլի, չկրնար բռնի իր խօսքն առաջ տանիլ՝ եթէ իր հայրը, եղբայրը,

մանաւանդ նշանածը չափաւորութեան և պարզութեան դաս և օրինակ տան իրեն։

Սիրտ ու սէր ունեցող աղջկան մ՚աչքին սիրողն է իրեն համար ամէն բան. մանանայ մ՚է այն որ աշխարհիս ամէն վայելումներու տեղը կ՚բռնէ. խեղճը չհարցնէր թէ իր սիրահարն որչափ ստակ, ինչ տուն, ինչ կարասի ունի, այլ իր հեռքը բռնած ծաղկին, երեսը զարդող կեփիւռին, աչացը մէջ ցոլացող լուսին կ՚հարցնէ թէ արդեօք իրենը զինքը կ՚սիրէ։

Այս սրտով էակներ շատ կան մեր մէջ, մանուշակի պէս հոտաւէտ՝ այլ անտես կ՚անցնին, և եթէ գտնուին՝ այն տեղն միայն մեր նանրասէր պարոններուն աչքերը կ՚բացին և քսակնին կ՚պարպին...։ Այն որ ունի թող վայելէ, ով ասոր բան կ՚ըսէ... բայց երբ չունևորն ալ ունևորին հովերը կ՚առնու և մեծ մեծ գուներ զարնելով օժիտ կ՚մուրայ, երբ՝ ես ալ կ՚նշանուիմ՝ թէ որ այսքան հազար լիրա և Պ. Տանձեանին պէս ապարանք ու ճոխութիւն ունենամ՝ կ՚ըսէ, այն կենդանիին ըրածը կ՚ընէ որ միսը կ՚թողու և ոսուերին ետևէն կ՚վազէ։

Մինթէ մեր պապերն այսպէս կ՚ընէին, ամենևին. և ահա ասոր համար առատութիւն և Աստուծոյ օրհնէնքն անոնց վրայէն չէին պակսեր։ Քիչ փափաք, քիչ ոսկի, պարզ, երբեմն կարօտ, այլ հարուստ սիրտ, անմեղ ու ժիր կեանք ունէին, և մեր աղգն ալ, հիմակուան պէս նուազելու տեղ՝ կ՚աւելնար։

Շիտակը՝ երիտասարդներուն այս ունայնասիրութիւնն է պատճառ որ հիմակ նշանտուք քիչ և պչրանք շատ կայ. բայց իմ խօսքերս կ՚անպտուղնեն Պ. Մոմոն և իրեն պէս պարոններն՝ որ մարդ են և կնամարդի մը պէս կ՚վարուին. կանք ու զօրութիւն ունին, և օրիորդի մը աշնասիրութենէ կ՚դողան, գլուխ և դիտութիւն ունին և կ՚վախնան որ օրին մէկը տկար էակի մը խաղալիկ կ՚դառնան. ուրեմն թող այնպիսիներ իրենց տեղը նստին, և զոնէ աղջիկներուն անունը բերան չառնուն, մինակ հաղուին սղուին և թրթռուրի պէս դառնան այն ճրագին չորս դին որ կը հրապուրէ այրելու համար։ Բայց ինչո՞ւ խօսքս կ՚երկնցնեմ, սևին սապոն, խևին խրատն ի՞նչ ընէ։

ԱՆԹԱՌԱՄ ԽԱԹՈՒՆ

ՎԵՐԱՔՆՆԻՉ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Հիմնական սկզբունք. Երկարատև բունութիւնէ ազատող Աղդ մը որ ազատութեան կ'վերածնի և նոր օրէնք, նոր Սահմանագրութիւն մը ձեռք կ'ձդէ, մեղմ կամ բուռն միջոցներով, կ'փութայ նոյն Օրինագրին Ճակատն ոսկի տառերով դրոշմել իր իրաւանց և երբեմն պարտուց յայտարարութիւնը, որպէս զի՝ եթէ երբէք օրէնքը կործանի, անոր ոդին ու ծուծը պարունակող նախագիծը դէթ սրտերու մէջ անջնջելի մնայ, և՝ իբր փարոս մը՝ ժողովուրդն առաջնորդէ 'ի փրկութիւն մրրկալից ժամանակներու մէջ։

Ահա այս նախագիծն ոմանք հիմնական սկզբունք կ'անուանեն, ոմանք յայտարարութիւն իրաւանց, այլք հիմնադիր։

Թերևս շատեր դիտեն որ երբ 63է Ազդային Սահմանագրութիւնն աւարտեցաւ, արդի Վերաքննիչ Յանձնակիրին Մեծ. անդամներէն մին՝ որ նախորդին ալ անդամ էր, չհաւանեցաւ իր ստորագրութիւնն անոր տակը դնելու՝ մինչև որ հիմնական սկզբունքը Օրինագրին դլուխը չանցաւ։ Սկզբունքի տէր անձի մը կողմէն համոզումի այս պնդութիւնը կ'ենթադրէ թէ հիմնական սկզբունքը Սահմանագրութեան անկիւնաքարը, անոր պահապան հրեշտակն է, և յուսալի էր որ այս անդամ ալ՝ աւելի ամուր, զուտ ձև մ'առնլով՝ մի և նոյն արիութեամբ կ'պաշտպանուի ազդային իրաւանց ախոյեաններու կողմէ։ Ըստ որում, ի՞նչ է սկզբունք ըսածը եթէ ոչ աքսիոմ մը, ինքնին ակներև ճշմարտութիւն մ'որ փաստի և վկայութեան անկարօտ և դրեթէ անայլայլելի է։ Արդ՝ ի՞նչպէս եղեր է որ 63է հիմնական սկզբանց՝ թող ոգը, իմասան այլայլեր, և ուր ուրեմն օտարոտի, վաղանցիկ գոյներ առեր է 70ին։

Այս կէտին վրայ աւելի երկար ու բաց խօսելու ազատութիւն չունինք. այսչափ միայն ըսենք որ նախորդ Սահմանագրութեան հիմնական սկզբունքը, թէև ցամաք, տեսական ճշմարտութեան աւելի կ'մօտի քան թէ այժմեանը։ Ինչ որ պայմանաւոր է և պարագայից ծնունդ՝ չկրնար բացարձակ սկզբունք սեպիլ, ըստ որում՝ յարաբերական արժէք մ'ունի, և Օրինագրին մէջ մէկ

քանին լոկ պատահական և բուռն իրողութիւններու հետևութիւններ լինելով՝ իրենց խորագրին չեն համապատասխաններ։

Աչէ. Հայ Ազգը՝ թէև մաս առ մաս երեք գլխաւոր տէրութեան ներքև կ'գտնուի, ինքն իր մէջ 'ի հոգևորին մէկ մարմին կ'կազմէ, գլուխ ունենալով Ս. Էջմիածնայ կաթողիկոսն, որուն դահը Հայաստանեայց առաքելական եկեղեցւոյ ազգային օրինաց և աւանդութեանց վրայ հիմնեալ է։ Այն մարմնոյն վարչութեան հանգամանքն էապէս կրօնական և ազգային է, և իր մէջ քաղաքական տարբ մը չունի։ Ամէն հայ անհատ ինչ քաղաքական դրոշակի ներքև որ գտնուի իրաւունք ունի իր ընդհանրական Կաթողիկոսին և պատրիարքին ընտրութեանը մասնակցիլ, ազգային եկեղեցեաց, դպրոցական հաստատութեանց, վանօրէից և հիւանդանոցներու (որոնք իրեն սեպհականութիւններն են) պայծառութեան և յառաջադիմութեան հոգ տանիլ։ Այս իրաւունքը մեր ազգային էութեան յատակից ճշմարտութիւն մ'է. դարուս կրօնից, խղճի, ազգայնութեանց և ինքնօրինութեան ընկղմունքը զայն կ'նուիրագործեն և անվթար կ'պահեն։ Ո՞ր տէրութիւնը կրնայ արգիլել հայուն որ իր կաթողիկոսն ընտրէ, ո՞ր բռնաւորը կրնայ ըսել հայուն որ իր եկեղեցիէն, իր ազգայնութենէ հրաժարի։ Արդ՝ քանի որ այս ազատութիւնն ունինք, քանի որ ազգային յատուկ Օրինագիր մ'ունինք, որուն նախատիպ սկզբունքը մեր պատմութենէ, նախնեաց սովորութիւններէն և սուրբ հայրապետաց դիրքերէն քաղած ենք, քանի որ այլ և այլ հայաբնակ երկիրներու մէջ հաղորդակցութեան միջոցները պակաս չեն, ինչո՞ւ համար նոյն Օրինագիրը բոլոր Հայ ազգինը չլինի, ինչո՞ւ համար անոր գործադրութեան եղանակը միօրինակ չլինի ամէն աշխարհի մերազնէից համար։

Ահա այս կենսական խնդիրը պարզել և լուծել Վերաքննիչ Ցանձնակմբին էական պաշտօններէն մին էր, ըստ մեզ։ Թերևս իր ուշադրութենէ չէ վրիպած, սակայն քանի որ իրական լուծում մը չենք տեսներ վերաքննեալ Սահմանադրութեան մէջ, բաց 'ի ակնարկութենէ մ'որով Կ. Պոլսոյ Պատրիարքը Ս. Կաթողիկոսի ներկայացուցիչ կ'հաստատուի (յօդ. 3), կ'ստիպուինք ըսելու որ Ազգը նոր ազգային Օրինագրով տարօրէն կերպարանք և կացութիւն մ'առած կ'ներկայի և իր բարոյական ամբողջութիւնը վտանգէ՝ զերծ չմնար։

Հարկ եղած պաշտօնական բանակցութեամբ՝ Ս. Էջմիածնայ աթոռին անկախութիւնն ու իրաւասութիւնը ապահովել, ամէն հայաբնակ քաղքի երեսփոխանական իրաւունք տալ անխտիր, ազգային հանրական պիտոյից հսկողութիւնն ու պատասխանատուութիւնը ամէն հայու վրայ իրը պարտ դնել, մէկ խօսքով Սահմանադրութեան այն տրամադրութիւններն որ Ազգին կենսական շահերուն կ'պատկանին՝ թէ Ռուսիա, թէ Պարսկաստան, թէ Հնդկաստան գործադրելի ընելը՝ թէև դժուարին՝ անկարելի գործ չերևիր մեզ. և այս պաշտօնը յատկապէս Ազգին զլուխը գտնող ազգային քաղաքագէտներու կ'վերաբերի։

Թերևս մեր այս թուիքն ոմանց անրջական երևին, սակայն այնպիսիները կ'հրաւիրենք նկատելու որ արդէն Ս. Կաթողիկոսի ընտրութեան գործողութեան՝ Ազգին լրութիւնն ալ իրը մանակիս կ'սեպի; թէ՝ ինչպէս այս գործողութեան՝ նոյնպէս ազգային ուրիշ վարչական կարգադրութեանց մէջ միայն կէս ազգային կէս կրօնական պարտաւորութեանց կատարում մը կայ (որ անբռնաբարելի է, որ բնաւ որ և է պաշտպան տէրութեան քաղաքականութեան չգալիր) և մեզի համար սա տարբերութեամբ որ այս պարտիքն օրինաւորութեան պայմաններով չեն կատարիր։ Ինչպէս երբեմն քանի մ'ամիրաներ՝ Թուրքիոյ հայոց իրը ինքնակոչ երեսփոխաններ՝ Ս. Էջմիածնայ կաթողիկոսի ընտրութեան համար քուէ կ'տային, հիմակ ալ այս ընտրութիւնը կ'կատարուի այս տեղ սահմանադրապէս, ուրիշ տեղ մը միապետական դրութեամբ, իսկ շատ տեղ ալ կան հայեր որ կաթողիկոսի դահակալութենէ եաքն անոր անունը կ'լսեն։ Այս դրութեամբ քաղաքականապէս պառակտեալ Ազգ մ'իր կրօնական և ազգային սերտ յարաբերութեանց մէջ ալ կ'բաժնի և օր ըստ օրէ 'ի կորուստ կ'մատնէ այն կենսատու տարրներն որով միայն հնարին է 'ի կատար հանել համայն Ազգին բարոյական և մտային վերաշինութեան գործը։

Ընդհանուր ժողով. Այս հարեանցիկ տեսութենէ ետև՝ նոր Սահմանադրութեան կարգէն շեղելով՝ անմիջապէս Ընդհանուր ժողովին կանչելիք, ըստ որում՝ մեզի համար տեսապէս Աչք և Ընդհանուր ժողով համանուն են, և այս վերջինը կ'անցանէ զանցանէ որ և է պատրիարքարան և պաշտօնէութիւն, թէ կրօնական թէ քաղաքային։

Սահմանադրական դրութեան մը փորձաքարն Ընդհ. ժողովն է, որ Ազգին վերհսկողութեան ատեանը կ'համարուի։ Որոշ ըստ կզբանց վրայ՝ սոյն ատեանին կազմութեան, ընտրութեան և պաշտօնատարութեան եղանակը քննելը՝ անոր ազատականութեան և օրինաւորութեան աստիճանն որոշել, գտնել և ճշդրտել է։ Արդ՝ եթէ Ընդհ. ժողովը տակաւին չորս միլիոն հայոց ժողովը չէ; զէթ Թուրքիոյ հայոց երեսփոխանն է իրօք։ Մենք չենք ժարհիր այն ըսելու, պատճառ. նայինք։

Ընդհ. ժողովին հարիւր երեսփոխան որոշել, թէև ըստ մեզ սահմանաւոր՝ թերևս պատկառելի թիւ մը կ'ներկայէր եթէ՝ նախ՝ անոր բաշխումն ընտրողաց բազմութեան համեմատութեամբ կատարուէր, երկրորդ՝ եթէ սահմանադրական և ազգային կանոնաց հակառակ չլինէր անոնց ընտրութեան եղանակը։ Ա. քանի որ ընտրողութեան ազատական պայմանը միօրինակ է ամէն տեղ; քանի որ Մայրաքաղաքը՝ գաւառաց վրայ ծանրանալու մտօք՝ չէ խնարհեր իր դրից և մտային ու նիւթական առաւելութիւններն 'ի համար առնուլ, քանի որ գաւառային ընտրողները՝ վեր 'ի վերոյ հաշուելով՝ քառասպատիկ աւելի են քան Պոլսաբնակները; հարկ էր որ երեսփոխանաց երեք չորրորդ մասը գաւառները տային, մինչդեռ այժմ՝ Օրինագրին համեմատ՝ լոկ երկու հինգերորդ մասը պիտի ընտրեն։ Կ'երևի թէ Սահմանադրութեան հեղինակները մեծ շնորհ մ'ըրած կ'սեպեն գաւառայնոց Պոլսոյ ուխտուն երեսփոխանները քառասունի իջեցնելով, սակայն, ինչ օգուտ, հաւասարութեան սկզբունքէն շատ հեռու մնացեր են; այնչափ դժուարին է օրէնսդրի մ'անգամ տեղական նախամեծարութիւնները թոթվել։

Ո՞ր սահմանադրական օրէնք, Ազգին ո՞ր կանոնը կ'ներեն որ ազգային երեսփոխանի անուն կրող անհատներ կրօնական համարատու ժողովէ մ'ընտրուին և զան բաղմին այն ժողովին մէջ որ ընդհանրութիւնը ներկայելու սահմանեալ է, ըսել կ'ուզենք եկեղեցական երեսփոխանները։ Ահա այս խոտորումը սպրդեր է նոր Սահմանադրութեան մէջ հինին 57 յօդուածէն; թէև այն ատեն կղերին դիւրազրգռութիւնն անպորբելու մտօք գրուած՝ ինչ հետևապէս պարագայից ղիջում մը՝ քան թէ օրինաւոր սկզբունքի մը հետևանքն էր։ Ընդհ. ժողովը՝ բացառիկ ընտրութեամբ ծնած

նունդ առնող այս տարասեռ մասամբ՝ երկդիմի կերպարան, երկակենցաղի երես մը պիտի առնու։ Եւ միթէ Ընդհ. ժողովին դուռը գոցել պէտք էր հայ կղերին, մինչեւ անոր նախագահն եկեղեցական մ'է։ Այո՛, գոցել պէտք էր, եթէ մեր եկեղեցականները զատ և Ազգը զատ մարմիններ կազմէին, գոցել պէտք էր, եթէ պապական կղերին նոսիրապետական գրութիւնը մեր Հայաստանեայց եկեղեցւոյ գրութիւնը լինէր։ Նոյն իսկ պապազատան պետութիւններու մէջ կրօնաւորն աշխարհականի գէմքով մուտ ունի յերեսփոխանական ժողովք, և կամ երկու օրէնսդրական մարմին կ'գտնուին՝ վերի և վարի, այնպէս որ եկեղեցականն՝ իբր վերի արտի յորեն՝ ծերակոյտի, նախարարաց, լօրտերու ժողովի մնայուն անդամ կ'որոշուի։ Սակայն մեր մէջ ոչ աղնուականաց ժողով, ոչ ծերակոյտ կայ, սա պարզ պատճառաւ որ էապէս աղնուապետութիւն և եկեղեցական իշխաններ չունինք։ Մեր ունեցածը լոկ ժողովուրդ մ'է, որ միանգամայն հայ եկեղեցին կ'կազմէ, ժողովուրդ մ'որ իր կրօնական պաշտօնեաները կ'ընտրէ, անոնց արժանաւորութեան վրայ վճիռ կ'տայ, ժողովուրդ մ'որ իր նախկին քաղաքական կայութեան, փառաց, պատերազմներու և աղէտից մէջ անդամ՝ ճշմարիտ եկեղեցականներովը կառավարեր, փայլեր, պատերազմեր ու լացեր է։ Այսպիսի ժողովուրդ մ'եկեղեցական երեսփոխանաց ընտրութեան գործէն անմասն թողուլ, զանի Հայաստանի եկեղեցիէն զատել է, պապական գրութեան դատապարտել է։

Իսկ եթէ մեր կղերն այս գրութեան միտի, Ընդհ. ժողովին, նոյն իսկ մեր Եկեղեցիին մէջ գործ չունի, և այն տեսն հողեւորը քաղաքայինէն զատելու ծանր խնդիրը կ'ծագի։ Արդ՝ քանի որ մեր կղերն այս միտումները չկրնար տանել՝ մեզի հետ պէտք է խոստովանի որ նոր Սահմանադրութեան տրամադրած եկեղեցական երեսփոխանաց ընտրութեան կերպը հակազդային է*.

---

* Այս տողերը մամուլի տալէն ետեւ՝ գիտեցինք որ այս ընտրութեան եղանակն Երեքնեակ Սահմանադրութեան տեսակին մէջ թէև փոխուեր, սակայն մեր ուշադրութենէ վրիպեր է։ 63ի Սահմանադրութիւնը եկեղեցական երեսփոխանաց ընտրութեան իրաւունքը Պօլսոյ բոլոր եկեղեցականաց կ'տար. Վերաբնեալը՝ Կրօնական ժողովին տուեր էր, Երեքնեալը՝ Թաղական ժողովներուն կ'տայ, և որչափ որ մեր տեսութեան կ'մօտի, դարձեալ բաւական չէ։ Ատոնց մեզ Քառաբնեալ Սահմանադրութենէ մը պահէ, քառամեայ քննութենէ մ'ետքն իսկ։

ուստի պէտք է որ ոչ միայն եկեղեցական երեսփոխանք աշխարհականաց պէս ընտրին, այլ և սոյն ընտրութեան իրաւունքը մի միայն Կ. Պոլսոյ չպահի, դաւառայնոց վրայ ալ տարածի և տաս կրօնական երեսփոխանաց ընտրութեան գործն անոնց յանձնի։ Այս ընելով Վերաքննիչ Յանձնակմբին Ռուսաֆէպաշան հաշին խանդարում չպատահիր։

Աշխարհական երեսփոխանաց ընտրութիւնը՝ հին Սահմանադրութեան համեմատ՝ ուղղակի ընտրող թաղեցիք կ'կատարէին, և ամենէն օրինաւոր ճամբան այս է։ Կ'երևի թէ տեղական դըժուարութիւններու և աղմուկի առաջն առնելու համար՝ աղմուկ մ'որ իր օգտակար կողմն ունի ազգային եռանդն արծարծելովը, յարմարագոյն դատեր է գործը թաղական ժողովներու ձգել՝ քիւրզանդեան և ֆոքէորեան կողմերը, և դաւառական ժողովներու՝ ազգենաբնակ դաւառներու կողմերը։ Լաւ, ահա նոր ապօրինաւորութիւն մը, օրինաց խարութիւն մը։ Նէրսէ՝ այսինքն Պոլիս՝ թաղական ժողովները (որ թաղական խորհուրդներէն զատ մարմիններ են արդէօք չհասկցանք) թաղակցոյին պատրաստած ցանկին վրայ կ'ընտրեն երեսփոխաններ, դոսրսէ՝ այսինքն դաւառները՝ դաւառական ժողովներուն կ'տրուի այս պաշտօնը։ Ասկէ կ'հետևի որ Պոլսի թաղական խորհուրդները՝ դաւառական ժողովներուն համակշիռ են, հապա դաւառի թեմական ժողովներն ի՞նչ են. ուրեմն Նէրսէ և դրսէ հայոց համար զատ զատ օրէնք կայ, խտիր կայ։ Խարութիւն մ'որ կրնայ աւելի ևս գրգռել այն դժգոհութիւնն ու անվստահութիւնը զոր դաւառայնոց մեծ մասը կ'տածէ՝ Պոլսեցւոյն՝ ամէն պարագայի մէջ՝ ինքնուրոյն ընտանձած օրէնսդրական հեղինակութենէն անմասն մնալուն։ Եւ արդարև պէտք չէ որ Պոլսի հայ օրէնսդիրը բարձրէն նայի դաւառաբնակ մերաղնէից, այլ ամէնքը մի և նոյն իրաւունքով և յարգանքով մեծարէ։ Ուստի ազգային երեսփոխաններն ամէն ուրեք կամ թաղերէն կամ դաւառական ժողովներէն պէտք է որ ընտրին։ Բայց Պոլիս՝ դաւառական ժողով չկայ եղեր. էհ, ահա ուրիշ, չքսեմ անիրաւութիւն, ապօրինաւորութիւն մը։

Սահմանադրութեան առջև Պոլիս դաւառ մ'է, և 'ի հարկէ իր տեղական ընդհանուր գործոց համար պարտի դաւառական ժողով մ'ունենալ։ Ինչպէս առաջ՝ հիմակ ալ սոյն ժողովին

պաշտօնը Ազգին Ընդհ. ժողովը պիտի վարէ, որով դաւառայնոց շահերն ու միշտ ծրագրուած և երբէք չգործադրուած բարեկարգութիւնները բարձի թողի մնացեր են և նորէն պիտի մնան։ Մինչև յայսօր Պոլսի հայն Ընդհ. ժողովին իր գիտցած կերպովը կաղմելով զայն իւրացուցեր և՝ քանի մը բացառութեամբ՝ իրեն տեղական խնդիրներով զբաղեցուցեր է։ Սակայն ի՞նչ է Ընդհ. ժողովի մը հեղինակութիւնը, ի՞նչ՝ անոր պաշտօնը. չէ թէ կոչուիլ, ինչպէս կ՚ըսէ Ս. Միլ, չէ թէ այս կամ այն թաղին վէճերը մաքրել, չէ թէ անդադար ընտրութիւններով պարապիլ, այլ բոլոր Ազգին հանրական խնդիրներու մասին՝ վիճաբանել, քննել, որոշել, օրինադրել, բարձր պաշտօնական մարմիններէն համար պահանջել, հաւանիլ, դատապարտել, պիտէն որոշել, տուրք հաստատել։ Սակայն ասոնք ընելու համար հարկ է որ Պոլսի ընդհանուր գործոց որոշումը յատուկ համաբատու գաւառական ժողովի մը յանձնուին։ Եւ ի՞նչպէս. փաղաքան, կամ լաւ ևս փաղաքային խորհրդին վրայ խօսելու առթիւ մեր միտքն երկարօրէն պիտի բացատրենք այս մասին։

Իսկ Ընդհ. ժողովի վրայ մեր խօսքը կ՚աւարտենք ըսելով որ՝ անոր վերանորոգման ձեւն իսկապէս վերանորոգում չէ, այլ անսահման մնայականութիւն թէ պաշտօնի և թէ կարծեաց։ Վասն զի՝ տաս տարուան շրջանի մը մէջ՝ երկու տարին անդամ մը հինգերորդ մասը փոխել՝ ժողովը նորոգել չէ այլ կարկտել և յետադիմութեան տարրներ խմորել։ Եթէ կ՚ընդունինք որ մէն մի երեսփոխան կարծիքի մը ներկայացուցիչն է, պէտք է ընդունիլ նաև որ հասարակաց կարծիքն առ նուազն չորս հինգ տարին անդամ մը կ՚փոփոխի 'ի լաւ անդր։ Ուստի Ընդհ. ժողովը մասնակի ընտրութիւններովը չէ թէ նոր այլ հին գաղափարներու և պիտոյից անհարազատ արձագանքը պիտի դառնայ։ Անկէ զատ՝ ազատական մեծամասնութեան մը գոյութիւնը գժուարին պիտի լինի, ըստ որում՝ ներքին ազդեցութիւններ պիտի ջանան՝ ամէն մասնակի ընտրութեան ժամանակ՝ յետադէմ տարրը ստուարացնել՝ և իրեն իշխանութիւնը յարատև պահել։ Թէև երեսփոխանաց ընտրական ճշդութիւնը պիտի աւելի, ճշդութիւն մ՚որ չափաբերական պիտութեանց մէջ աւելի կ՚փնտռի քան թէ Օրինադրի մը մէջ, սակայն մեծ կէտ մը շահիլ է հինգ կամ վեց

տարին անգամ մը ծողովը լիովին լուծել, և նորն ընտրելէն եան՝ իր պաշտօնէն՝ հրաժարելը՝ փոխանակ անշարժութեան պատապարտելու։

ՍՈՒՐԷՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԲԱՐԻԶ ընկաւ՝ գրեթէ չորս ամիս ու կէս (սեպ. 16–26 յունվ. ըստ Ն. Տ.) դիւցազնաբար առկալէն՝ և ուր ուրեմն Տիւքրօի և Թրոշուի ձեռօք ըրած յարձակումներէն յուսակտուր մնալէն եան։ Այս դէպքին վրայ՝ Գրանսայի մէկ ծայրէն մինչ ծայրը յուսահատութեան և զրպարտութեան աղաղակներ կ'բարձին։ Բայց ի՞նչ կ'նշանակէն այս ապարդիւն աղաղակները, ուր էին և են Գրանսայի հանելիք միլիոնաւոր զինուորները։ Աւելի սովը քան թէ դերմանական ռումբեր բռնադատեցին Ազգային պաշտպանութեան կառավարութիւնը յունվ. 28ին զինադուլի մը պայմանագրութիւնը կնքելու, որ խաղաղութեան աւետաբերն էր։ Ինչ որ մարդկօրէն հնարին էր ընել՝ ըրաւ Բարիզ՝ ակընդէտ սպասելով դաւառներէն օգնութեան ձեռք մը, և այս ձեռքը դալու կ'ուշանար։ Արդէն Ավրօնի տարահարթին առնուեր, Մէյի անձնատուութեան չափ վհատութիւն պատճառեր, Թրոշուի դէմ դանդատներն աւելցուցեր էր, և յունվարի 4ին Բարիզի հարաւային բերդերուն դէմ ռմբակոծութիւնը սկսեր էր։ Հարաւային կողմը՝ Շանդի, մաղապուր կ'նահանջէր (11–12 յունվ.) Մանս թողլով՝ դէպ 'ի Լավալ՝ Գրէտերիկ Շարլի և Մէքլէնպուրկի դքսին առջև. 'ի հիւսիս՝ Գէտէրսպ՝ գրեթէ նոյն պահուն՝ քանի մը յաղթութեան փորձեր ընելէն եան՝ Վօն Կոպէնի բուռն յարձակմանէ յետ ու ցան կ'տեսնէր իր բանակն ու դէպ 'ի Պլամոն կ'քաշուէր. արեւելեան կողմը՝ Պուրբակի Կարիպալտիի հետ՝ պաշարեալ Պէլֆորի թեկն վազելու ատեն՝ Մանթայֆէօլ և Վերտէր անոնց բանակն ամիսներ կ'ճղնին՝ և Կարիպալտի կուելով դէպ 'ի Մասսոն կ'նետուէր. Պուրբակի՝ այս ձախորդ ելից վրայ յուսակտուր՝ զէնքն իր անձին կ'դարձնէր և կ'թողուր որ զօրքը դէպ 'ի Հէլվէտիա անցնի ապաստանի զինաթափ, Սէտանին գործը չնորոգելու համար։

Եւ սակայն կ'գանային տակաւին Գրանսայի մէջ այնպիսի մար-

դիկ՝ ամէն հովէ զգածուող մարդիկ՝ որ այս անկանոնելի վիճակը չնշմարելով՝ զինադուլի առթիւ՝ մոգնուելիւն կ'պրուան, ինչպէս պուսային Մէջի անձնատուութենէ եաքը՝ ինչպէս և պլոմի Նապոլէօն զոչեց Սեատանի առջև, և կարծես թէ անտեղեակ են՝ որ Բարիզ՝ երբեմն փափկութեան դրախտ մը՝ շուն, կատու, մուկ կ'ուտէր, վերջերը սև չոր հացի կտոր մը գտնելու անդամ նեղութիւն կ'քաշէր, ամէն օր հարիւրաւոր մարդիկ, այր, կին, մանկտի սև հողը կ'ինջեցնէր*, կարկուտի պէս գերմանական ռումբերու տեղալն իր տուներուն վրայ, իր հոյակապ և շքեղ շէնքերուն վրայ կ'տեսնէր և իր երկու միլիօն ժողովրդովը կորբստեան անդունդը սլիտի գլորէր, թէ վշտալի այլ անհրաժեշտ անձնատուութեան մը գլուխ չծռէր ակամայ։ Եւ ինչ էր Բարիզի գիմադրութեան նպատակը, միթէ թշնամին վանել իր պատուարներուն քովէն, ոչ, այլ հնար եղածին չափ անձնուրացութեամբ տոկալ՝ որպէս զի գաւառային բանակներ կազմին և իրեն ձեռք տալով՝ թշնամին երկաթեայ շրջանակը երկուստէք կոփեն կտրեն, և ասով՝ եթէ ոչ ամէն բան՝ գէթ իրենց պատիւն ու Ֆրանսայի հողն ազատեն։ Ընդունայն որոտայ, տաս կտոր եղաւ Կամպէդա, ընդունայն ընդ առաջ անցան գաղղիական զօրքեր գերմանական բանակներու դէմ, Քրուբն ալ զորոտայ, և ամպի պէս ցրուեց սրբեց իր առջևէն նորակիրթ այլ հրաշունչ զումարտակներ. և ինչպէս կ'ըսէ Միշլէ, քրուբ դիւցազնութիւնը ջնջեց և ինքն այս անման պատերազմին գիւցազն եղաւ, ինչպէս որ ասեղնաւոր հրացանը 66ին Սատովայի մէջ եղեր էր. վասն զի արիական մարտ, ճակատ առ ճակատ դուսպար վերցան այժմ, և Ֆրանսայի սիրական զէնքին, սուինի օրն անցաւ։

Եւ միթէ Հասարակապետութիւնը մեղապարտ և պատասխանատու է այս պարտութեան համար, ինչպէս որ Վիլհէլմշօհէի կալանաւորը գժպհի և անլի յայտարարութեամբ մը կ'պնդէ, և որպէս թէ տակաւին հին կայսերական միտք պաշարած՝ Հռոմայեցի կայսեր մը պէս երես ունի հարցնելու, «Վարոս, տուր ինձ իմ

---

* Լրագիր մը կ'ըսէ թէ պաշարման ժամանակ՝ գնդակէ ու զանազան հիւանդութենէ մեռնող անձերու թիւը հարիւր հազարի կ'հասնի։

լէգէոններս » : Է՛հ, Գրանսա՝ ևս առաւել Բարիզ՝ իր քանա-
մեայ ամօթն ու ապականակիր վարքը արեան հեղեղով լը-
բել, բարոյապէս վերականգնիլ և Հասարակապետութեան վերա-
ծնիլ ուզեց, ամէն քան նորէն շինեց ; կազմեց գրեթէ եռամսեայ
միջոցի մը մէջ, և պատերազմը շարունակեց, և աւելի դիմա-
ցաւ, քան Սէտանի մարդն՝ որ քսան տարիէ վեր կ՚ամբանար մի
միայն՝ Գրանսան ճղմելով, կեղեքելով՝ իր դահը հաստատ պա-
հելու. և երբ գիտեց որ սահմանադրական շինուելի ու սուտ գի-
ջումներէ դժգոհ ժողովուրդն օր օրի կ՚զայրանայ և իր դահը
կ՚երերայ, ծածուկ փոթորկին առաջը յաղթութեան պսակներով
առնելու յուսով՝ Գերմանիոյ վրայ կ՚յարձակէր յանիրաւի, որպէս
թէ՝ ինչպէս երբեմն Լուի Փիլիպի օրով՝ Սմիրազպուրկ դրաւելու,
կամ Շալօնի բանակը զօրայ հանդէս ընելու կ՚երթար : Իր մե-
ղադրանքը յօդս կ՚ցնդի, և Գրանսա՝ Պիսմարքի և Ժ. Ֆավրի
մէջ ստորագրուած 21 օրուան զինադուլի պայմանագրին համա-
մատ՝ իր Ազգային ժողովին կազմութեան կ՚զլաղի ամէն ուրէք՝
որպէս զի անոր միջոցաւ առած վէրքերը դարմանէ և՝ եթէ
հնար է, պատուաւոր հաշտութիւն մ՚ընէ : Զէրզք տէրութիւն-
ները յաղթեալը համբերութեան՝ և յաղթողը չափաւորութեան
կ՚յորդորեն : Անկլիա՝ և հեռահեռ միւս տէրութիւնները Հա-
սարակապետութիւնը կ՚ճանչեն : Նոր Ազգային ժողովն՝ որուն մեծ
մասը թագաւորութեան հակամէտ կ՚երևի և Օրլէանեան խմբ
ունի, իր առաջին նիստը Պօրտօի մէջ փետր. 12ին կ՚ընէ և նա-
խորդ կառավարութեան հրաժարականը կ՚ընդունի : Թիէր կառա-
վարութեան դլուխ կ՚սահմանուի և ատենաբանութեամբ մը խա-
ղաղութեան պէտքը կ՚զդացնէ, պետական խնդիրներու վէճն ու-
բիշ առթի թողուլ ; Ազգին վէրքերը բուժելն և ամէն կուսակ-
ցութեան ոգի միութեան մէջ թաղելն անհրաժեշտ կ՚համարի ;
նոյնպէս՝ նոր պաշտօնէից կազմութիւնն՝ որ չափաւորական է՝
ինքն ալ Օրլէանեան հարստութեան կուսակից՝ ժողովին կ՚յայտ-
նէ և հաշտութեան պայմաններու վրայ Պիսմարքի հետ բանակ-
ցելու պաշտօնը կ՚ընդունի : Սոյն պայմաններն արդէն որոշած
կ՚երևին, և եթէ ստոյգ է Բրուսիոյ թագաւորին՝ որ Գերմանիոյ
կայսրը հրատարակուեցաւ 'ի Վէրսայլ (20 յունվ.), Պէրլին դառ-
նալիքը՝ Բարիզի Յաղթական կամարէն անցնելով, վերջնագիրն

'ի Պրուքսէլ, ինչպէս որ կ'ըսի, կնքուելու մօտ է։ Գերմանիոյ պիտի ասին՝ Ալսաս, Լորէնի մէկ մասը, Մէց, թոյլ տալով բնակչաց որ իրենց ուզած կողմը գաղթեն. նոյնպէս երեք տարուան մէջ վճարելու պայմանաւ հինգ երկիլիոն ֆրանք իբր պատերազմի ծախս. Պէլֆոր և քանի մ'ուրիշ կտոր երկիր՝ մինչև պայմանները կատարումը գրաւ մնալով յաղթողին։ Այս ամէն վնասներուն փոխարէն Ֆրանսա Հասարակապետութիւն մը շահեցաւ, և անով ազգային մէջ նոր նոր կենսական ոյժեր պիտի ստանայ. սակայն Դաղղիական ազգին բարքն, ոգին և պատմութիւնը ճանչցողը կրնայ երաշխաւորել թէ Հասարակապետութիւնը յարատև պիտի մնայ, ահա այս է խնդիրը։

Մ'իւս տէրութեանց քաղաքական իրողութիւնները կ'նեմանան խաղաղութեան համար եղած բանակցութեանց առջև։ ԱՆԳԼԻՈՑ Բարիզ մնալը գումարուեցաւ, իսկ դեսպանաժողովը քանի մը նիստ ընելով միայն սա կարևոր սկզբունքին վրայ համաձայն դտաւ թէ՝ դաշնագրութիւն մը՝ մանաւանդ 66ի դաշնագրութիւնը ստորագրող տէրութեանց և ոչ մէկը կրնայ զայն առանց մեծագոյն մասին հաւանութեանը։ Ա՛րդարև կարևոր որոշում մը; եթէ այսպիսի սկզբունք մը կարող է դաշնագրութիւններն անվթար պահել, արևելեան պատերազմի երկիրը փարատած է։ ԱՒՍՏՐԻԱ պաշտօնէից փոփոխում կրեց՝, և Պայսթ Պիսմարգի հետ օր օրի կ'տաքնայ, թերևս Սև ծովու խնդրոյն առթիւ։ Ռումանիա միշտ տարտամ վիճակի մէջ կ'մատանի և Շարլ իշխանի հրաժարականի խնդիրը կ'դոյի։ ՀՌՈՄ՝ երեք չորրորդ մասը կ'ողողի Տիբերիս գետին յորդելովը, և ջուրը 12 կանգուն կ'բարձրանայ։ Այս ողողման մօտ՝ քաղքիս ջրհեղեղն անշան կ'թուի։ Ս. Պասը՝ փոխանակ օգնութեան դալու երկու հաղար ընտանիքի որ անտուն մնացեր էին, շրջաբերական մը կ'հանէ և կ'ուզէ ապացուցանել որ այն ողողումն երկնային պատուհաս մ'է։

(ԻՎԱՆՕԷ)

ԳԼՈՒԽ Բ.

Կար մէկ մենակեաց՝ սարսափ իր թեռին,
Ձիաւոր որսորդ՝ սիրող երէին.
Մարդ էր քաջասիրտ՝ Աբբայ ահաւոր
Շատ ձիեր ընտիր ունէր նա յախոռ։
Իսկ երբ կ'արշաւէր՝ դառնաշունչ հովին
Իր նժոյգին սանձ հնչէր սուր ուժգին
Զանգակի մը պէս՝ սրբատաշ մատռան
Ուր սուրբն այս հայր պահպանէր խորան։

ՁՕՍԸՐ

Թէպէտ խոզպանն առեն առեն կ'յորդորէր և կ'սաստէր իր ընկերին որ յառաջ քալէ, սակայն Վամպա՝ քանի կ'լսէր ձիերուն դափրն որ կ'մօտենար՝ Ճամբուն վրայ աստ անդ կ'դէ-դերէր ամէն առթիւ, և մերթ կաղնիին դէզ մը տհաս կաղին-ներ կ'քաղէր, մերթ գլուխը դարձնելով՝ նոյն Ճամբէն անցնող գեղացի աղջկան մը ծուռ ծուռ կ'նայէր (leer). ուստի շատ չանցաւ ձիաւորները վրայ հասան։

Ամէնքը տաս հոգի էին, ընդ յառաջ քալող երկուքը խիստ նշանաւոր անձեր կ'երևէին, իսկ մնացեալները հետևորդներ։ Դրժ-ւարին չէր անոնց մէկուն սլաշտօնն ու վիճակը հասկնալ, ակ-ներև կ'տեսնուէր որ բարձրագիր եկեղեցական մ'էր. Կիստորեան* կարգի կրօնաւորի հագուստ գրեր էր, թէև՝ սոյն կարգին կա-նոնէն դուրս՝ իր զրեսսն ընտիր կերպասէ շինուած էր։ Իր վե-րարկուն ու կնդուղը՝ որ Գլանտրի խիստ լաւ չուխայէ կարուած էր՝ լայն՝ այլ շնորհալի ծալքով՝ իր վայելչակազմ՝ թէև փոքր ինչ զիրուկ՝ անձը կ'պարուրէր։ Անձնուրացութեան նշան մը չէր երևեր բնաւ այս կրօնաւորին դէմքին վրայ, և ոչ աշխար-հային փառաց արհամարհանք մ'իր ընթացքին մէջ. կարելի պիտի լինէր ըսել թէ իր երեսին գծերն աղուոր էին, եթէ իր

* Այս կարգի կրօնաւորները Սբ. Պենէտիկտոսի ուխտին մէկ ճիւղն էին (1109ին)։ Ծ. խմբ.

աչքին կամարին (pen-honse) ներքև չպահէր այն նենդալի Եպիկուրեան քթիին որ զզուշաւոր հեշտասիրի մը նշմարն է։ Սակայն՝ իր սրաշոշնին և կացութեան բերմունքը սորվեցուցեր էր իրեն ըստ հանձոյս իր կերպարանքը կազմել և հանդիսաւոր երես մ՚առնուլ, թէև 'ի բնէ առ նմանս ներողամտութեան ոգի մը կը ցուցնէր։ Իր կարգին կանոնաց, նոյնպէս սրասերու և ժողովեարու հրավարտակներուն հակառակ՝ այս եկեղեցական իշխանին թեզանիքը աստառ ունէին և մուշտակապատ զարձած էին. վերարկուն վզին կողմէն ոսկի կոճակով մը գոցեր էր. իսկ իր ըզդեստին մաս մասերն այնքան քնքուշ էին ու զարդարուն, որչափ են այժմու գոէրոՀՏ* մը (դողդոջատ) արդն ու զարդը, վասն զի գուէրուհի մ՚իր աղանդին հագուստը սրահելով հանդերձ՝ անոր սարդութեան այնպիսի փարելի հրապոյր մը կ՚տայ, թէ կերպասի ընտրութեան և թէ ձևին կողմէն՝ որ աշխարհային մնոտեայ գրոշմն ակն յայտնի կ՚ցուցնէ։

Այս արժանի եկեղեցականը հեծեր էր լուսասուն սիրաքայլ ջորի մ՚որուն կազմածը չափէ դուրս զարդարուն՝ և՝ ժամանակին սովորութեան համեմատ՝ սանձն արծաթէ զանգակիկներ ունէր։ Ջորիին վրայ՝ քաջավարժ ձիաւորի մը յատուկ գիւրութիւն ու շնորհ կ՚ցուցնէր քան վանականի մ՚անձարակութիւնը։ Սուտգիւ կ՚երևէր թէ այս շնորհաղարդ կրօնականը շիտակ ճամբաներէ ուղևորելու համար միայն այսպիսի սուրին հեծանելի մը կ՚գործածէր, թէև լաւ վիճակի մէջ՝ և հանդիստ քալած մ՚ունէր։ Իր հետևորդներուն մէջ՝ փոքրաւոր մը կար՝ որ՝ ուրիշ պարագայի համար՝ Անտալու գիա մարզած՝ ընտիր նժոյգ մը հետն առեր էր, որոյմէ վանականներն Անկլիա կ՚բերէին այն ժամանակ մեծ դժուարութեամբ և ծախսով՝ որպէս զի մեծաշուք անձերու ծախեն։ Այս փառաւոր երիվարին թամբն ու ծածկոյթը երկար կապերտով մը ծածկուած էր, որ գրեթէ մինչև գետինը կ՚հասնէր և որուն վրայ թաղեր, խաչեր և ուրիշ կրօնական նը-

---

* Այսպէս կ՚կոչուին՝ յԱնկլիա և յԱմերիկա՝ տեսակ մ՚աղանդաւորներ որ անդադար կ՚գոզդոզան Աստուծոյ դատաստանէն, ամէն եկեղեցական խորհուրդ կ՚մերժեն, երդում չեն ընէր, վերջոյր չեն հաներ որ և է մարդու առջև, պատերազմի չեն երթար, պարզ կ՚ապրին և ամէն գոէրէր անխիր, մարդ ու կին, կրնայ քարոզել իրենց ժողովարաններու մէջ։ Ժորժ Ֆոքս՝ 1650ին հիմնեց այս աղանդը։ Ս. Խմբ.

շանակներ ոսկեթել բաներ էին։ Ուրիշ փոքրաւոր մ՚ալ բեռնակիր ջորի մը կ՚քաշէր, որ անշուշտ իր մեծաւորին հանդերձանքը կ՚կրէր. նոյն ուխտէն երկու ուրիշ ստորնագոյն կրօնաւորներ եռանէն կ՚դային 'ի միասին, իրարու հետ խօսակցելով և ծիծաղելով և առանց իրենց միւս ընկերներուն ուշ դնելու։

Այս գերասանական կրօնականին ընկերը քառասուն տարեկան էն աւելի՝ վախտ, ուժեղ, բարձր ու ջլուտ մարդ մ՚էր. ըմբշային անձ մ՚որուն յարատև հոլերն ու կրթութիւնները մարդկային մասերէն ուրիշ բան չէին թողած վրան՝ այլ միայն մկանունք, ոսկր, ջիլ, որոնք հաղար տեսակ նեղութիւն կրեր և նորէն կրելու պատրաստ էին։ Իր դլխին վրայ կարմիր չուխայէ խոյր մը կար մուշտակապատ՝ այն տեսակէն զոր դաղլիացիք (mortier) կ՚անուանեն՝ շրջեալ անկանի նմանելուն համար։ Ուստի իր դէմքը բոլորովին բաց էր և անոր երեսոյթը՝ եթէ ոչ երկիւղ՝ օտարներուն տեսակ մ՚ակնածական ահ կ՚ազդէր։ Իր վէս երեսը՝ որ հուժկու և յեսին ծայր ազդու էր՝ շարունակ արեւադարձի տակ մնալէն՝ այրեր և դրեթէ խոփշկի մը սեւութիւնն առեր էր, այնպէս որ արդի վիճակին մէջ՝ կարելի է ըսել թէ՝ հանդարտ էր կրկց փոթորիկն անցնելուն, սակայն իր ճակատն ուռուցիկ երակներուն ձեւէն՝ ամենաթեթև այլայլութեամբ իր վերին շուրթն ու խիտ պեխերն արագ շարժելէն՝ դիւրին էր դուշակել որ իր ներքին մրրիկը կընայ հեշտիւ նորէն դրդուիլ։ Իր սուր, թափանցիկ սև աչերը՝ ամէն անգամ որ ակնարկ մը նետէին՝ կ՚յայտնէին թէ քանի քանի սպառնալիներ տապալեր, վտանդներու դիմադրաւեր էին, և կարծես թէ նոր նոր խոչընդոտներ իր ետեներուն դէմ առ դէմ կանգնուն տեսնելու կ՚փափաքէին՝ որ զանոնք իր ճամբուն վրայէն աւլեն սրբեն արիութեան և անվեհերութեան փորձ մը նորէն ցոյց տալու համար։ Իր յօնքին վրայ տեսնուած մէկ խոր սպին՝ կերպարանին նոր դաժանութիւն և մէկ աչքին չարաղոյժ երեսոյթ մը կ՚տար, վասն զի այս աչքը նոյն աւթիւ թեթև մը վիրաւորեր՝ և տեսողութիւնը՝ թէև կատարեալ, անոր գիծը մասնակի թիւրեր էր։

Այս անձին հագուստին վերի մասը՝ ձեւին կողմէն՝ իր ընկերինին կ՚նմանէր՝ և վանական երկար վերարկու մ՚էր. իր կարմիր գոյնէն կ՚իմացուէր որ կրօնաւորաց չորս ուխտէն և ոչ մէ-

կուն միաբանն էր։ Վերարկուին աջ ուսին վրայ մասնաւոր ձեւով կտրուած սպիտակ չուխայէ խաչ մը կար։ Նոյն զգեստը տարաձև շապիկ մը, այս է վերտ զրահ մը ծածկեր էր՝ որ նոյն կերպ թեղնիք և թաթպան ունէր, և այնպէս սքանչելի ոլորուած և հիւսուած որ մարմնոյ դիւրակոր էր, ինչպէս են աւելի լաւ նիւթերէ բանուած արդի մեքենագործ գուլպաները։ Իր ազդրներուն առջի կողմը՝ որ վերարկուին ծալքերէն զոյուած չէին, նոյնպէս վերտով ծածկուած էր. իր ծնկերն ու ոտները շերտով կամ իրարու վրայ դրուած՝ բարակ պողպատիկ պահպանակներով պահպանուեր էին. իսկ վերտ զանկապան մ՚ոտիչ կոճէն մինչև ծունգը հասնելով՝ ոտունգը կ՚պաշտպանէր ամրապէս և այս ձիաւորին պատերազմական զէն ու զարդը կ՚ամբողջացնէր։ Երկար երկսայրի դաշոյն մը մէջքին կախեր էր և այս էր միայն իր յարձակողական զէնքը։

Իր ընկերին պէս՝ այս ալ ջորիի վրայ չէր հեծեր, այլ ձամբու համար տոկուն դրաստ մը, որպէս զի իր ամէնի մարտիկ երիվարը խնայէ, զոր ձիասան մ՚եռանէն կ՚բերէր, թէև արդէն կազմ էր 'ի պայքար, և գլուխն անցուցած էր կուռծոյ գլխակը (chamfron) և ճակատէն կարճ սլաք մը կ՚ցցէր։ Թամբին մէկ կողմէն կախուեր էր ոսկեկուռ տարբ մը, միւս կողմէն ձիաւորին փետրաղարդ սաղաւարտն ու վերտ կնդուղը, երկթաթ թրով մը, զոր այն ատենի ասպետները կ՚գործածէին։ Երկրորդ ձիասան մ՚ալ իր մեծաւորին նիզակը բարձր բռներ էր, և որուն ծայրէն դրոշակ մը կ՚ծածանէր, և իր վերարկուին վրայի խաչին նման խաչ մ՚ասնոր վրայ կ՚տեսնուէր։ Նոյն ձիասանը կ՚կրէր նաև իր տիրոջը փոքրիկ եռանկիւնաձև զրահն՝ որ վերի կողմը լայնակեկ էր լանջ պահպանելու չափ և անկից վար կ՚նեղնար սրամէտ։ Այս զրահը ծիրանի չուխայով մը ծածկուած՝ և հեսեսապէս նշանաբանը տեսնել անհնար էր։

Այս երկու ձիասաններուն կ՚հետեւէին ուրիշ երկու սպասաւորներ, որոց սեւուկ դէմքը՝ սպիտակ ապաբոշն ու իրենց հագուստին արեւելեան ձեւը կ՚ցուցնէին թէ Արեւելքի հեռաւոր երկրի մը բնակիչներն են։ Այս մարտկին և հետեւորդներուն տեսքը վայրագ էր և այլանդակ. իր ձիասաններուն հագուստը շքեղ, և սարակինացի սպասաւորներն ալ արծաթէ մանեակներ ունէին.

իսկ իրենց սեւամոյր մերկ բաղուկներուն և սրունքներուն վրայ ալ նոյն մատաղէն բաղանները։ Հագուստներին մեսաքսով ջանած էր, իրենց տիրոջ Ճոխութիւնն ու կարևորութիւնը կ'յայտնէին, և անոր զինուորական պարզութեան հետ նշանաւոր հակապատկեր մը կ'ընծայէին։ Կոր սուրեր կախեր էին՝ որ ոսկեզօծուած դաստակ և կամաց ունէին, և իրենց պերճ և դեղաշէն օսմանեան գաշտոնեներն առելի գեղեցանց էին։ Ամէն մէկը թամբի աղեղին չոյս տաք երկայն սլաքներու կապոց մ'անցուցեր էր, որ պողովատիկ սուր ծայրեր ունէին, գէնք մ'որ շատ կ'գործածուի սարակինացոց մէջ, և որուն անունը տակաւին կ'յիշուի Եր-էլ-էրթ ըսուած գուսպարին մէջ՝ որ արևելեան երկիրներու յատուկ մարդանք մ'է։

Այս սպասաւորներուն երիվարներն իրենց պէս օտար էին։ Սարակինոսեան ծագում, հեռաւոր արապական ցեղէ էին, և իրենց քնքուշ անդամները, փոքրիկ գարշապարի մաղերը, նօսր բաշը, թեթև ուռիդ շարժուածները, երևելի հակապատկեր մ'ունէին այն լայն, յօդաշինգ և ծանր ձիերուն հետ, որոց ցեղն այն ժամանակ Ֆրանսայի և Նորմանիայի մէջ կ'մնայէին, որպէս զի կռածոյ և վերստ զրահնեց հպարտ մարտիկները հեծնեն. եթէ այս ձիերն արևելեան նժոյգներու մօտ դրուէին՝ պիտի կարծուէր թէ կոշտ մարմինը տառերի քով դրուեր է։

Այս հրեսին տարօրինակ երևոյթն ոչ միայն Վանայի հետաքրքրութիւնը շարժեց, այլ և իր ծանրաղլուխ ընկերինը։ Կիւրթ՝ կրօնականը տեսնելուն անմիջապէս հասկցաւ որ ծորվօ վանքին վանահայրն էր, և բոլոր շրջակայ բնիկները գիտէին որ որսի, խնջոյքի, և եթէ անունին արատ չդար՝ նոյն իսկ իր ուխտին անվայել աշխարհիկ զուարճութիւններու սիրահար էր։

Սակայն այն ժամանակները՝ մարդիկ կղերին վարուց վրայ այնպիսի թոյլ կարծիքներ ունէին որ Էյմէր վանահայրն իր մենաստանին շրջակաները պանծալի անուն մը կ'վայելէր։ Իր աղատ և զուարթ բնաւորութեամբն և ամէն սովորական մեղայ ներելու յօժարամտութեամբը թէ աղնուական և թէ ազատանի մարդկան աչքի լոյսը դարձեր էր, որոյմէ շատերուն արենակից կ'դտնէր՝ ինքն ալ նշանաւոր նորման դերդաստանէ մը սերած լինելուն։ Ի մասնաւորի կիները սրամտիր չէին այս մարդուն

բարքն ու վարքը մանր քննել, քանի որ գեղեցիկ սեռին ակնե-
րև հոգի կ'տար և սովորաբար հին աստական գրեակներու սը-
բահներն ու հովանոցները սպրդող տաղտուկը փարատելու շատ
մը հնարներ դիտէր։ Էյմէր վանահայրը՝ որսական զբօսանաց
չափէն աւելի հետամուտ լինելով՝ ներելի էր իրեն քաջավարժ
բազէներ, սրնթաց բարակներ ունենալ 'ի Նօրթ Ռոյտին, և այս
ձիերքն ազնուական երիտասարդութեան շատ մեծարելի կ'դառ-
նար։ Իսկ պառաւներուն հետ՝ 'ի Հարկին՝ ուրիշ դեր մը կ'խա-
ղար և արժանաւոր կերպով կ'կատարէր։ Թէև գրոց հմտութիւնը
հարևանցի, սակայն իր կարծեցեալ գիտութեան մասին տղէտ-
ներու պատկառանք ազդելու չափ յաջողակ էր, իսկ միւս կող-
մէն այնպիսի ծանր վարմունք ու լեզու կ'բռնէր, և հանան-
յութեան իշխանութեան վրայ ճառելու առեն այնպիսի մեծասաստ
ձայնով մը կ'քարոզէր որ ամէնքը զանի սուրբի տեղ կ'դասէին։
Նոյն իսկ գեղեցիկ ծողովուրդը՝ որ իրեն կիր կեր եղող անձերուն ա-
մենէն անաչառ դատաւորնիչն է, Էյմէր վանահօր յիմար գոր-
ծերուն արդահատութեամբ աչք կ'գոցէր։ Էյմէր առատասիրտ
էր, և ինչպէս որ յայտնի է ուղղամտութիւնը շատ մը մեղ-
քեր կ'պարակէ, թէև սուրբ գիրքն ուրիշ մտքով նոյնն ընել
կ'պատուիրէ։ Վանքին եկամուտները՝ որոց մեծ մասն իր ձեռքն
էր՝ իր յատուկ անբաւ ծախուց կ'վատնէր՝ գեղացիներուն ալ
պարգևներ տալով և շատ անգամ թշուառներ մխիթարելով կը
գործածէր։ Եթէ Էյմէր վանահայրն որսին եռանդն սրարշաւ վա-
զէր՝ կամ հայկերոյթին շատ նստէր, եթէ Էյմէր վանահայրը՝
գիշերուան ժամեր յատուկ ժամադրութեան տեղ մ'անցնելէն ետ
՝ այդուն դէպ 'ի տուն դառնար և վանքին եռանդ դունակէն
ներս սահիլը տեսնէր, տեսնողներն իրենց ուսերը միայն կը
թօթվէին և սնոր անկանոն ընթացքին հաշտ աչք կ'նայէին,
մտածելով որ շատ վանականներ նոյնպէս կ'վարին, թէև իրենց
վարմունքն անբասիր հանելու համար փոխարէն ընտիր յատկու-
թիւն մը չունին։ Հետևապէս Էյմէր՝ իր բնաւորութեամբը մեր
Սաքսոն ստրուկներուն քաջամանօթ էր, որոնք կոշտ խոնարհու-
թիւն մ'ըրին և փոխարէն անոր «ՀՐՀՆԵԼ ԼԷՐՈՒ», «ՈՐԴԻՆԷՐ» ըն-
դունեցան։

Բայց իր ընկերին և հետևորդներուն տարօրինակ կերպարանը

խոզարածին և Վամպային ուշադրութիւնն ու զարմանքը դրաւելով հաղիւ թէ ասոնք Էյմէր վանահօր խօսքին միտ դրին՝ երբ սա հարց ու փորձ ըրաւ թէ՝ մօտ տեղւանք օթեւան մը կայ արդեօք, այնքան հիացեր մնայեր էին սեադէմ օտարականին կէս վանական կէս զինուորական դէմքին՝ և անոր արեւելցի սպասաւորներուն անհեթեթ հագուստին վրայ։ Հաւանական է նաև՝ որ տրուած օրհնութեան ոճն ու խնդրուած տեղեկութիւնն իրենց ականջին խորթ հնչեց, թէև սաքսօնեան ականջներ վարժ էին այն ձայնին։

— Զաւակներս, ձեզի հարցի — ըսաւ վանահայրը, իր ձայնը բարձրացնելով — եթէ այս կողմերը կ'դտնի արդեօք բարեսէր մարդ մ'որ 'ի սէր Աստուծոյ և 'ի շնորհս մեր մայր եկեղեցւոյ՝ անոր երկու ամենախոնարհ պաշտօնեաներուն և իրենց ծառաներուն մէկ գիշերի համար ապաստանութիւն և ուտեստ շնորհէ։

Այս խնդիրն այնպիսի իրապէս կարեւորութեամբ մ'արտասանեց որ անյարմար էին լիովին իր զործածած մեղմիկ ոճին հետ։

— Մայր եկեղեցւոյ երկու ամենախոնարհ պաշտօնեաներ — կրկնեց Վամպա մտովի, բայց որչափ որ յիմար էր՝ իր միտքը յայտնելու զգուշանալով — կ'փափաքէի տեսնել թէ ո՞յք են այն եկեղեցւոյն տան հաղարապետները, մատանապետներն և գլխաւոր սպասաւորները։

Վամպա՝ վանահօր խօսքին վրայ այս դիտողութիւնը լռիկ ընելէն ետև՝ աչերը վեր առաւ և եղած հարցումին այսպէս պատասխանեց։

— Վերապատուելի հայրեր, եթէ աղուոր կերակուր և կակուղ անկողին կ'ուզէք, կրնաք՝ քանի մը մղոն ևս յառաջ քշելով՝ Պրինքսվօրթի վանատունը հասնիլ, և ձեր կարգին վայել ընդունելութիւն մը տեսնել։ իսկ եթէ այս գիշեր ապաշխարութեամբ անցնել լաւագոյն կ'համարիք, կրնաք՝ վարը՝ սա վայրի պուրակին կողմը զարնել՝ և անկից շիտակ Գօրմանհուրսի մենաստանը հասնիլ ուր սրբակրօն Ճգնաւոր մը ձեզ իր տնակին ու աղօթից մասնակից պիտի ընէ այս գիշեր։

Վանահայրն այս երկու առաջարկութիւնները լսելով՝ գլուխն օրհց ու ըսաւ։

— Բարեմիտ մարդ, եթէ բոժոժներուդ ձայնէն խելքդ թնտած

չլինէր, պիտի գիտնայիր որ clericus clericum non decimat. այսինքն, մենք եկեղեցականքս իրարմէ տասնեականութիւն չենք խնդրեր, այլ աշխարհականներէն, որով առիթ կ'ունենան ծառայել Աստուծոյ, անոր յատուկ պաշտօնեաները պատուելով և մխիթարելով։

— Իրաւ է, պատասխանեց Վամպա — որ ես որչափ որ աւանակ եմ՝ պատիւ ունիմ ձեր սրբութեան ջորիին պէս բոժոժներ կրել. բայց ես կարծէի թէ նախ ձեր մայր եկեղեցին և իր պաշտօնեաները պարտաւոր են ողորմասիրութեան օրինակ տալ։

— Ապիրատ, լրբութիւնը մէկդի թող — ըսաւ սպառազէն զինուորականը՝ բարձր ու դաժան ձայնով մը միմոսին խօսքը կտրելով — և ցոյց մեզ, եթէ գիտես, այն Ճամբան որ . . . ինչ անուն ունի այն Ֆրանքլինդ, վանահայր իմ։

— Սէտրիկ — պատասխանեց վանահայրը — Սէտրիկ տաքսօնը. հիմա ըսէ ինձ, կարիծ, արդեօք անոր տունը մօտ է, և Ճամբան կրնամ մեզի ցոյց տալ։

— Դժուարին է Ճամբան գտնել — պատասխանեց Կիւրթ, որ առաջին անգամ բերանը բացաւ — և Սէտրիկի ընտանիքը շատ կանուխ կ'պառկի։

— Վա՛յ, ինչ չնչին պատճառ է այդ, ամպիսան — ըսաւ զինեալ ձիաւորը. — շատ դիւրին է անոնց արթնցնալ և մեզի պէս Ճամբորդներու պիտոյքը հոգալ, քանի որ չենք խնայիր մուրալ հիւրընկալութիւն մը զոր պահանջելու իրաւունք ունինք։

— Զգիտեմ — ըսաւ Կիւրթ խոժոռ դիմօք — եթէ պէտք է ցուցնել իմ սիրոյս տունն այն մարդոց, որ իրր իրաւունք կ'պահանջեն պատսպարան մը զոր ուրիշներն իրր շնորհ կ'հայցեն։

— Արդեօք ինձի հետ վիճաբանիլ կ'ուզես, դու սարսուկ — ըսաւ սեւադէմ զինուորը և իր երիվարին մտրակ տալով Կիւրթին կիսաշրջան մ'ընելու սարսեց, նոյն պահուն ձեռքի փայտը վերցուց դեղջուկին լրբութիւնը պատժելու մտօք։

Կիւրթ վայրկեան ու քինախնդիր ակնարկ մը շեշտեց անոր վրայ և դժնդակ այլ տատամսոտ շարժումով մը ձեռքը գտնակին կանթին վրայ (haft) դրաւ. բայց Էյմէր վանահայրն իր ընկերին և խոզպանին մէջ ջորին քշելով կուռին առաջն առաւ։

— Կամա՛ց, եղբայր Պրայն, սուրբ կոյս վկայ, դու կարծես

թէ տակաւին Պաղեստին կ'դանուիս, հեթանոս Թրքաց ու անհաւատ Սարակինոսաց հետ կ'մաքառիս։ Մենք կղզեցիքս հարուածներ չենք սիրեր, սուրբ եկեղեցւոյ հարուածներէն զատ, որով իր սիրելիները կ'պատժէ։ — Ըսէ ինձ, բարեփառ մարդ, — հարցուց Վամպային դառնալով և իր խօսքին արծաթ դրամ մը միացնելով — ըսէ ինձ, ո՞ւր է սաքսօն Սէտրիկի բնակարանը. անտարակոյս պիտի գիտնաս, և քու սրբազգ է ուղևորի մը ճամբան ցոյց տալ, եթէ մեր նուիրական կարգն անգամ չունենայ։

— Իրաւ որ, պատկառելի հայր — պատասխանեց միմոսը — ձեր ընկերին սարակինոսեան զլուխն իմնէս վանեց ուղղղ ճամբան, և չեմ գիտեր թէ այս գիշեր ինչպէս պիտի գտնենք մեր տան դուռը։

— Վա՛յ — ըսաւ վանահայրը — եթէ կամք ընես կրնաս ցոյց տալ։ Այս մեր վերապատուելի եղբայրը՝ սուրբ տեղեաց ազատութեան համար բոլոր կեանքը Սարակինոսաց հետ կռուելով անցուց. Ռէմբլը (տաճարական) ասպետներուն կարգէն է, ինչպէս որ լսած պիտի լինիս, ինքը կէս վանական, կէս զինուոր է։

— Եթէ կէս վանական է — յարեց միմոսը — պէտք չէ որ ճամբուն վրայ հանդիպողը մարդոց հետ այսպէս անվայել կերպով վարուի, երբ ասոնք իրենց չվերաբերող հարցումներու պատասխան տալու անգամ՝ անիրաւ կենան։

— Նենգամտութեանդ կ'ներեմ — պատասխանեց վանահայրը — սա պայմանաւ որ Սէտրիկի բնակարանն ինձ ցուցնես։

— Լաւ ուրեմն — պատասխանեց Վամպա — այս ճամբան բռնեցէք գացէք, սուրբ հայրեր, մինչև որ անկուած խաչի մը հասնիք որ գետնէն կանգնուի չափ բարձր է. ապա ձախ կողմը դարձէք, վասն զի այն խաչին մօտ չորս ճամբայ կայ, և յուսամ որ փոթորիկը չբրդած սրատապարան գտնէք։

Վանահայրն իր խմաստուն ուղեցոյցին շնորհակալ եղաւ, և հետևորդները ձիերնին մտրակելով յառաջ անցան՝ որպէս զի փոթորիկը վրայ չհասած իջևան մը գտնեն։ Մինչդեռ երիվարներուն դափրը կ'հեռանար, Կիւրթ իր ընկերին ըսաւ.

— Եթէ մեր վերապատուելի հայրերը ցոյց տուած շաւիղը բռնեն այս գիշեր Ռոթէրվուտ չպիտի հասնին։

— Անշուշտ — պատասխանեց կատակաբանը ծիծաղելով — բայց

կրնան Ջէֆֆիլսո հասնիլ՝ եթէ բաղդ ունին, և այն քաղաքը շատ յարմար է իրենց համար։ Մի կարծեր թէ այնպիսի անձարակ եղէորդ մը (woodsman) լինիմ որ այծեմին պահուած վայրը շան ցոյց տամ, եթէ չեմ ուզեր որ զայն որս ընէ։

— Իրաւունք ունիս — ըսաւ Կիւրթ — վատ բան մը կ'լինէր եթէ Էյմէր՝ Բօվէնա տիկինը տեսնէր, և աւելի վատ՝ եթէ Սէտրիկ այն գլխաւոր քահանային հետ կռուի բռնէր, ինչպէս որ շատ հաւանական էր. բայց լաւ սպասաւորներու պէս կ'վայլէ մեզ մտիկ ընել, տեսնել և բան մը չըսել։

Հիմակ դառնանք ձիաւորներուն. ասոնք ստրուկներէն շուտով կ'հեռանան և ֆրանքօ-նորման լեզուով հետևեալ խօսակցութիւնը կ'շարունակեն.

— Ի՞նչ ըսել կ'ուզեն այն ստրուկներն իրենց անձնունի լըբրութեամբը — հարցուց տաճարականն Էյմէր վանահօր — և ինչու համար չթողեր որ զանոնք պատժեմ։

— Իրաւ որ, եղբայր Պրայն — պատասխանեց վանահայրը — դժուարին է ինձ պատճառ մը մէջ բերել անոնցմէ մէկուն համար. յիմար մ'է նա, որ խելքին փչածը կ'խօսի. իսկ միւս դեղջուկը՝ այն վայրենի, դաժան և անհաշտելի ցեղէն կ'ինջնէ, որոց մէկ քանին, ինչպէս որ ստէպ քեզի ըսեր եմ, նկուն սաքսօնններու սերունդին մէջ կ'գտնուին, և որոց դերադոյն զուարճութիւնն է ամէն կարելի միջոցներով իրենց ասելութիւնը յայտնել յաղթողներուն դէմ։

— Լաւ մը ծեծ տալով՝ անոր քաղաքավարութիւն կ'սորվեցնէի — յարեց Պրայն. — այս տեսակ ստամբակներու հետ վարուելու վարժ եմ. մերք թուրք կալանաւորները Օտինի չափ վայրագ և անվարելի են, սակայն երկու ամիս միայն իմ դերապետիս հսկողութեան ներքև անցնելէն ետև՝ ամէնքն ալ զառնուկի պէս հեզ, հլու, պաշտօնասէր և հնազանդ դարձան։ Հաւատա, վերապատուելի, որ թոյնէ և դաշոյնէ զգոյշ կենալ պէտք է, վասն զի երկուքն ալ աղատօրէն կ'գործածեն եթէ չնչին առիթ մը տաս։

— Իրաւ է — պատասխան տուաւ Էյմէր վանահայրը — բայց ամէն երկիր իր յատուկ սովորոյթն ունի. ոչ միայն Սէտրիկի տան Ճամբան չէինք իմանար զանոնք ծեծելով՝ այլ և ձեր մէջ

մեծ կոխ մը պիտի ծպէր եթէ ճամբան ալ դանէինք։ Լաւ յիշէ արդէն ըսածս. այն հարուստ Գրէնքլինը հպարտ, վէս, նախանձոտ և ցասկոտ է. մանաւանդ՝ ազնուականաց և նոյն իսկ՝ Գիլիպ Մալվուազէնի և Բէժինալտ Գրոն–տը–Պէօի պէս՝ դրացիներուն ոսոխն է. իր տոհմին արտօնութիւններն այնչափ վէսօրէն կ'պաշտպանէ, և այնքան կ'պարծի Հիրվարտ՝ Եօթնասպետութեան այս անուանի ախոյեանէն շնտակ սերելուն՝ որ ամէն մարդ զինքը Սաքսօն Սէտրիկ կ'անուանէ։ Սէտրիկ պարծանք կը սեպէ որ ինքն այնպիսի ժողովրդեան մը զաւակն է որուն նախնիքը շատեր կ'ուրանան՝ վախնալով որ սարուկներուն բաժին ընկած խստութիւններուն մասնակից չլինին։

— Էյմէր — ըսաւ տաճարականը — դու փաղաքշոտ (gallant) դեղաղէտ, և սիրոյ խնդիրներու մէջ դուսանի մը չափ փորձառու մարդ մ'ես. բայց պէտք է որ այն անուանի Բօվէնան հրաշագեղ կին մը լինի որպէս զի պահելիք չափաւորութիւնս ու համեստութիւնս փոխարինէ, եթէ հարկ է իր Սէտրիկ՝ ըմբոստ հօրը պէս գեղջուկի մը սիրաը վասակիլ։

— Սէտրիկ իր հայրը չէ — պատասխանեց վանահայրը — այլ հեռաւոր ազգական մը. Բօվէնա՝ պարծուկ Սէտրիկէն աւելի տոհմիկ գերդաստանէ մը կ'իջնէ, և մինակ թեթև արենակցութիւն մ'ունի անոր հետ։ Բայց և այնպէս՝ Սէտրիկ անոր խնամակալն է, մի միայն իր յատուկ ընտրութեամբը կարծեմ. սակայն իր սանուհին աղջկանը պէս կ'սիրէ. անոր գեղեցկութիւնը քիչէն դու ինքնին պիտի դատես, և եթէ իր զոյնին յստակութիւնը, և իր վսեմ, այլ անուշ կապոյտ աչերուն տպաւորութիւնը՝ չվանեն յիշողութենդ Պաղեստինի սևահեր օրիորդները, նոյնպէս Մէհէմմէտի դրախտին հուրիները, ես ալ թող անհաւատ՝ և չէ թէ եկեղեցոյ մէկ հարազատ զաւակը սեպիմ։

— Եթէ այդ պանծալի գեղեցկութիւնը նժարին մէջ կշռուի և չծռի, դիտես արդէն թէ մեր դրան ինչ է։

— Դրա դրինք — պատասխանեց վանահայրը — իմ ոսկի մանեակս՝ տաս տակառ կիսլրոսի գինիով հետ. այս տակառներն իմն են անշուշտ, և որպէս թէ արդէն վանքին շտեմարանն ու մեր ծերուկ Ցրնի մատակարարին բանալին տակ լինէին։

— Սակայն ես պիտի լինիմ դատաւորը — ըսաւ տաճարակա-

նը՞ — և ես համոզելով պիտի վկայեմ որ նախորդ Հոգեղալըս-տեան տօնէն վեր անոր պէս գեղադիմ օրիորդ մը չեմ տեսած. միթէ մեր գրաւն այս չէ՞ : Վանահայրը, մանեակդ վտանգի մէջ է և Էշկի-տը-լա-Զուշի ձիարշաւին մէջ այն ալ վգնակէս պիտի անցուցնեմ :

— Առաջ շէն շնորհ վաստակէ — ըսաւ վանահայրը — և ապա ուղածիդ պէս գործածէ. քու անսուտ պատասխանիդ կ'վստահիմ, և իբր ասպետ և եկեղեցական ճշմարիտը կ'խոստովանիս անշուշտ : Սակայն, եղբայր, խօսքս մտիկ ըրէ, քիչ մը լեզուդ մարդավարութեամբ շարժէ, և մինչև այսօր անհաւատ կալանաւորի և արևելեան գերիներու հետ ունեցած սովորական վարմունքդ մէկդի ձգէ : Եթէ Սէտրիկ սաքսօնը թշնամանես, և քաջ գիտցիր որ թշնամանք մ'իսկոյն կ'զգայ, այնպիսի մարդ մ'է որ, ոչ քու ասպետութեանդ, և իմ բարձր պաշտօնիս, և ոչ իսկ մեր սուրբ կարգին նայելով երկուքնիս ալ իր տունէն կ'վռնտէ, և կէս գիշեր անպամ լինի, մեզ արտաւներուն հետ բնակելու կ'ղրկէ : Մանաւանդ՝ զգուշաւոր եղիր Ռովէնան դիտելու ատենդ, վասն զի Սէտրիկ նախանձոտին սիրով կ'սիրէ զանի, և եթէ թեթև կասկած մ'առնու, մեր բանը կ'լմննայ : Կ'ըսեն թէ իր միակ որդին հօրեղբայրական տունէն ճամբեր է գորովագին աչք այն աղջկան նայելուն, և կ'երևի թէ հեռուէն զանի պաշտել, և Տիրամօր խորանին առջև ինչ խորհրդով որ կ'մնաեանք՝ նոյնպէս անոր մօտիկ ներելի է միայն :

— Շատ լաւ, բաւական է — ըսաւ տաճարականը — մէկ գիշերուան համար պէտք եղած զգուշութիւնը պիտի գործածեմ և նորատի օրիորդի մը պէս հեղիկ պիտի վարիմ. իսկ մեզ՝ Համիտին և Ապտուլլահին հետ՝ տունէն վռնտելու վտանգին զալով վստահ եղիր որ այդպիսի անպատեհութիւն մը տեղի չունենար, և մեր կայանը բռնելու համար բաւական ուժով ենք :

— Պէտք չէ գործն այն աստիճանի բերել — պատասխանեց վանահայրը. — բայց ահա միմսին նշանակած գեռնատունկ խաչը. մինակ այս գիշեր այնքան մութ է որ մեր բռնելիք ճամբան դժուարաւ պիտի գտնենք : Կարծեմ թէ ձախ կողմէն զարնել պէտք է ըսաւ :

— Աջ կողմէն — ըսաւ Պրայն — եթէ լաւ կ'յիշեմ :

— Ո՛չ, ձախ կողմն, անշուշտ ձախ կողմն է. կ'յիշեմ որ իր փայտէ սրոփն այնպէս ցցուց։

— Ճիշտ է. բայց սուրը ձախ ձեռքը բռներ էր՞— ըսաւ տաճարականը — և ուսին վրայէն Ճամբան նշանակեց։

Երկուքն ալ իրենց կարծիքին վրայ կամակորութեամբ կ'պնդէին, և ինչպէս որ կ'պատահի այսպիսի պարագայի մէջ՝ սպասաւորները կանչեցին և հարցուցին, բայց ասոնք ալ Վամպային մօտ չդտնելով՝ ցոյց տուած ուղղութիւնը չէին տեսած։ Ի վերջ Պրայն բան մը դիտեց՝ զոր նախ մթին չէր տեսած, և ըսաւ.

— Անհաւասիկ խաչին ոտքը մարդ մը կայ որ կ'քնանայ կամ մեռած է. Հիւպո, Նիքակովդ շարժէ անդամ մը։

Այն ինչ շարժեց որ մարդն ոտք ելաւ քաջ ֆրանսերէն դոչելով.

— Դու ո՞վ որ ես, անվայել է քեզ իմ մտմտուքս վրդովել։

— Մինակ կ'ուզէինք հարցնել քեզի — ըսաւ վանահայրը — Ռօթէրվուտի Ճամբան և Սէտրիկ սաքսոնին բնակարանը։

— Ես ալ այն կողմը պիտի երթամ — պատասխանեց օտարականը — և եթէ ձի մ'ունենայի ձեր առաջնորդը կ'լինէի. վասն զի Ճամբան տաժանելի, թէև ինձի քաջայայտ է։

— Մեր շնորհակալիքն ու վարձք պիտի ընդունիս, բարեկամ — ըսաւ վանահայրը — եթէ Սէտրիկին տունը տանիս մեզ անվտանգ։

Ուստի իր սպասաւորին մէկուն հրամայեց որ հետևակ ձին հեծնէ և իրն օտարականին տայ, որպէս զի զիրենք առաջնորդէ։

Սակայն այս ուղեցոյցը՝ մոլորելու դիտմամբ Վամպային ցոյց տուած Ճամբուն հակառակ Ճամբայ մը բռնեց, որով անտառին աւելի խորերը մտան, քանի մը վտակէ անցան, թէև վտանգաւոր էին ձախձախուտ տեղերէ սահելուն. բայց օտարականը՝ իր բնազդումով հաստատ հողերն և ապահով կողմերը քաջ կ'ճանչէր. յետին զգուշութիւններ ընելով՝ առաջիններէն աւելի լայն ծառուղի մը բերաւ հասուց փոքրիկ խումբը՝ և միւս ծայրը երևցող ցած ու տձև շէնք մը ցոյց տալով՝ վանահօր ըսաւ.

— Ահա այն է Ռօթէրվուտ, սաքսոն Սէտրիկին բնակարանը։

Այս լուրն Էյմէրին սիրտը բացաւ, վասն զի տակուն մարմին մը չունէր և շատ նեղութիւն ու տաղնապ կրեր էր վտան-

զալի ճահիճներէն անցնելու ատեն, այնպէս որ իր ուղեցոյցին և ոչ հարցում մ'ընելու հետաքրքիր եղեր էր։ Բայց այժմ սիրտը հանդարտ և պատսպարանն ալ մօտ գտնուելուն, իր հետաքրքրութիւնն սկսաւ զրգռիլ և ուղեցոյցին հարցուց թէ ո՞վ է։

— Ես ուխտաւոր մ'եմ և շնտակ Երուսաղէմն կ'գաւնամ— պատասխանեց օտարականը։

— Աւելի աղէկ կ'ընէիր եթէ անդ մնալով սուրբ գերեզմանին աղաւթեան համար պատերազմէիր — ըսաւ տաճարականը։

— Իրաւ է, վերապատուելի ասպետ — պատասխանեց ուխտաւորը, որուն շատ ծանօթ կ'երևէր տաճարականին կերպարանը. — բայց երբ անոնք որ երդմամբ ուխտ ըրեր էին սուրբ քաղաքն ազատելու, իրենց պարտքը չեն կատարեր և շատ հեռուն կ'թափուին, ինչո՞ւ կ'զարմանաս եթէ ինձի պէս ստորին զեղացի մը անոնց լքած պաշտօնէն կ'հրաժարի։

Տաճարականը ծանր պատասխան մը տալու վրայ էր, բայց վանահայրը չթողուց և զարմանալով ըսաւ թէ ինչպէս իրենց ուղեցոյցն երկար տարակայութենէ մ'ետքը, անտառին բոլոր խորշերը միտքը պահած լինի։

— Ես այս կողմերը ծնած եմ — պատասխանեց ուղեցոյցը. և այս պատասխանը տալու ատեն Սէտրիկին տան առջևը հասան։ Այս շէնքը՝ ցած և անկանոն՝ շատ մը բակեր ունէր և ահագին տեղ մը բռներ էր. որչափ որ մեծութենէ կ'իմացուէր որ տան տէրը հարուստ մարդ մ'է, սակայն դարձեալ բոլորովին տարբեր էր այն աշտարակաւոր դղեակներէն՝ ուր նորման ազնուականները կ'բնակէին և որոց ձևը բոլոր Անկլիոյ Ճարտարապետութեան ոճը դարձաւ։

Սակայն Ռոթերվուտ անպաշտպան չէր. այն վրդովալի ատենները չկար բնակութիւն մ'որ իր ամրոցը չունենար, ապա թէ ոչ հեռաւոր օրը յաւար և 'ի հուր կ'մատնուէր։ Խորունկ փոս մը բոլոր շէնքը կ'պատէր և մնտակայ վտակէ մը ջրով կը լեցուէր։ Մօտաւոր անտառէն կտրուած սրածայր գերաններով խրամատին ներքին և արտաքին եզրին վրայ պատնէշներ շինուած էին։ Արևմտեան կողմէն արտաքին պատնէշին վրայ դուռ մը կար, որ ներքին պատնէշին դրան հետ շարժական կամրջով մը հաղորդակցութիւն ունէր։ Նոյնպէս առ զգուշութեան

պս դռները ցից անկիւններու պաշտպանութեան ներքև դրեր էին, որպէս զի 'ի հարկին անոնց վրայ նետաձիգ և պարսաւոր մարտիկներ կեցնեն։

Այն դրան առջև՝ տաճարականն իր շեփորն ուժգին հնչեց, վասն զի անձրևն որ երկար ատենէ վեր կ'սպառնար, նոյն միջոցին սկսաւ բռնութեամբ վազել։

ԳԼՈՒԽ Գ.

Այն ատեն (տխուր սփոփանք) Գերմանիոյ ծովու
Մռնչունը լսող ցրտաշունչ եղերքէն
Գեղնահեր, կապուտակն հասաւ սաքսօնն հուժկու։
ԹՕՄՍՕՆԻ ապոստոլիան։

ԶԱՓԻ դուրս երկար ու լայն՝ այլ շատ ցած սրահի մը մէջ կաղնիէ սեղան մը կար. այս սեղանն անտառէն կտրուած անտաշ և գրեթէ անողորկ փայտէ շինուած էր, և վրան սաքսօն Սէտրիկին երեկոյեան կերակուրը պատրաստ կ'կենար։ Սրահն երկնից կամարէն զատող հեծանէ և դերանէ առաստաղը տախտակներով և յարդով միայն ծածկուած էր. ամէն մէկ անկիւն մեծ կրակ մը կ'վառէր, և որովհետև կրակարանները խիստ կոշտ կերպով շինուած էին, որչափ ծխահանէն՝ նոյնչափ ևս սրահէն մուխը դուրս կ'ելնէր։ Այսպէս շարունակ ծխոտելէն՝ դերանները մրոտեր և սև փայլ մ'առեր էին։ Սրահին միւս երկու կողմերը ռազմական զէնքեր կախուած էին և իւրաքանչիւր անկեան մէջ երկթև դռներ կային որ սոյն ընդարձակ շէնքին միւս մասերուն կ'տանէին։

Իսկ այս բնակարանին միւս կողմերը սաքսօնեան ժամանակին մի և նոյն կոշտ պարզութիւնն ունէին, պարզութիւն մը զոր Սէտրիկ անեղծ պահելու հոգ կ'տանէր։ Գետինը հող ու կիրով շաղուած և կոխուելով քարացած էր, ճիշտ մեր արդի ցորենի կալերուն սալակապին պէս։ Սրահին գրեթէ մէկ քառորդը դեսնէն աստիճանով մը բարձր էր, և այս միջոցը՝ որ գար (platform) կ'կոչուէր, գերդաստանին և նշանաւոր այցելուներու յատկացած տեղ մ'էր։ Այս նպատակաւ կարմիր չուխայով պերճօ-

ըէն ծածկուած սեղան մ՚առ 'ի շեղ դրուեր էր դարին վրայ, և ասոր մէջ տեղէն աւելի երկար ու ցած սեղան մը կ՚երկննար մինչև սրահին խորը, ուր սպասաւորներ և ստորին կարգի մարդիկ կերակուր կ՚ուտէին. այս ամէնը Տի ձևն ունէր, կամ հինօրեայ ճաշի սեղաններու կ՚նմանէր, որոց սեսակը տակաւին կը տեսնուին Օքսֆօրտի և Քէմպրիճի վաղեմի դպրոցներուն մէջ։ Քանդակաշէն կաղնիէ հոծ աթոռներ և բազմոցներ նոյն դարատափին վրայ շարեր էին, և ասոնց ու բարձր սեղանին վերևը չուխայէ ամպհովանի մը կախուած էր որ նոյն պատուաւոր կայանը նստող մեծամեծները գէշ օդէն և մանաւանդ անձրևէն կ՚պահպանէր, վասն զի խարխուլ տանիստանին քանի մը տեղերէն ջուրը ստէպ կ՚վազէր։

Սրահին այս վերի կողմի պատերը՝ դարին տարածութեամբ՝ օթոցներով և վարագոյրներով ծածկուած էին, դեռևնը գորգ կար, այս ամենը փալիլուն, մանաւանդ շողշողուն գոյներով բանելու փորձ մ՚ըրեր էին։ Սոսր սեղանին վերևը՝ առաստաղը ծածկոյթ չունէր, անհարթ ծեփուած պատերը մերկ էին և դերբուկ հողն անդորդ. սեղանին վրայ փուոյ չկար և անտաշ նստարաններ աթոռի տեղ կ՚բռնէին։

Վերի սեղանին մէջ տեղը՝ միւսներէն բարձր՝ երկու աթոռ տեղաւորեր էին, մին տանտիրոջ և միւսը տիրուհիին համար՝ որ հիւրընկալ հացկերոյթին կ՚նախագահէին, և այսպէս ընելով՝ հոգ բաշխողներ կ՚ըսէին, տիտղոս մ՚որ սաքսոններու մէջ շատ պատուաւոր էր։

(Շարունակելի)

Նախորդ թիւին մէջ

Երես	Վրիպակ	Ուղիղ
11	Պողոսի	Պետրոսի
14	Պունի	Բունի
34	Դոյլ	Դուլ

Խմբագիր—Տնօրէն Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ